Ազգ

Azg
armenian daily

14 ՆՈՅԵՄԲԵՐ 1994, ՈՒՐԲԱԹ # 197 (700)

SABCO
OVERSEAS TRADING LTD.

LIMASSOL CENTRE,
BLOCK B, SUITE 307,
P. O. BOX 6543
TEL +357-5-370962
FAX +357-5-370945

OUR BANKERS: B. E. M. O. BANK, LIMASSOL, CYPRUS: FEDERAL BANK OF THE MIDDLE EAST, LIMASSOL, CYPRUS: BANK OF CYPRUS, LIMASSOL, CYPRUS: HELLENIC BANK, LIMASSOL, CYPRUS

Հայաստանի եւ ԱՊՀ երկրների համար
Կիպրոսի եւ Ռոստերդամի պահեստներից

ՇԱՔԱՐ, ԱԼՅՈՒՐ, ՅՈՒՂ, ԿԱՐԱԳ

ուղիղ հասցեատիրոջը՝ ծովով եւ ինքնաթիռով

ԱՆՁՈՒԴԱՐՁ

Վարչապետն ընդունեց «աջերին»

Նոյեմբերի 12-ին ՀՀ կառավարությունում վարչապետ Հրանտ Բագրատյանը հանդիպում ունեցավ համատեղ հայտարարությամբ հանդես եկած 7 կուսակցությունների ու կազմակերպությունների՝ ՀՅԸ, ՀՌԱԿ, ՀՔԺՄ, ՀՂԿ, ԱԴՀԿ, «Ազատական Հայաստան» եւ ՌԱԼԴԿ ներկայացուցիչների հետ:

Հանդիպման մասնակիցները քննության առան հանրապետությունում իրականացվող տնտեսական քաղաքականությունը, ինչպես նաեւ սոցիալ տնտեսական քաղաքականության ընդհանուր սկզբունքները միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցելու տեսակետից:

Զրույցն անցավ գործնական մթնոլորտում, եւ մասնակիցները պայմանավորվեցին շարունակել հանդիպումները ու մտքերի փոխանակությունը շոշափված հարցերի վերաբերյալ:

ՀՀ կառավարության մամուլի ծառայություն

Ռուբեն Միրզախանյան. «Քաղաքական ուժերը աջերի եւ ձախերի բաժանելն անընդունելի է»

ԵՐԵՎԱՆ, 13 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Նախընտրական արշավի ընթացքում խոսել որեւէ քաղաքական դաշինքի մասին վաղաժամ է, սակայն ուրախալի է, որ ընտրարշավն սկսվել է, որն առավելապես կրում է ներկուսակցական բնույթ, այստեղից կարծիք է հայտնել Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության ատենապետ Ռուբեն Միրզախանյանը:

«Նոյյան տապան» գործակալության տված հարցազրույցում նա անընդունելի համարեց ժողովրդին աջերի եւ ձախերի բաժանելու փորձերը, որովհետեւ նման կարգի բաժանումները քաղաքական առումով ծայրաստիճան հարաբերական են, քանի որ հանրապետությունում գործող մի շարք կուսակցություններ, այդ թվում առաջատար, գտնվում են գաղափարախոսական որոնումների եւ կազմակերպչական ձեւավորման շրջանում: «Նման բաժանումը հղի է նաեւ այլ կարգի հետեւանքներով եւ եթե այսօր հայտարարենք, որ քաղաքական ուժերն աջ են կամ ձախ, ապա վաղը կպահանջենք, որ աջերը վերացնեն ձախերին կամ հակառակը», ասաց նա: ՀՌԱԿ ատենապետն ընդգծեց նման բեւեռացման անընդունելիությունը, գտնելով, որ այն չի բխում ժողովրդի շահերից:

Ինչ վերաբերում է ընտրական բլոկների ձեւավորմանը, Ռուբեն Միրզախանյանը դա միանգամայն բնական եւ հնարավոր համարեց, սակայն ընդգծեց լուրջ բանակցությունների եւ ճշտումների անհրաժեշտությունը «մինչեւ նման կազմավորումների վերջնական ձեւավորումը»: Ժողովուրդը նախևան ընտրություններն պետք է իմանա, թե ումից ինչ ակնկալիքներ կունենա, ընդգծեց նա:

Ժողովրդագրական ընթացքի կարգավորումը ռազմավարական նշանակություն ունի

«Հայաստանն ԱՊՀ առաջին երկիրն է, որը Գաղթի միջազգային կազմակերպության հետ ստորագրեց համագործակցության մասին համաձայնագիր», այսպես հայտարարեց այդ միջազգային կազմակերպության Անդրկովկասի գրասենյակի ղեկավար Կիմ Դենիս Նայիկը, երեկ ՀՀ ԱԳՆ-ում կայացած մամուլի ասուլիսում: Համաձայնագիրը ստորագրեցին Կիմ Դենիս Նայիկը, ՀՀ արտգործնախարար Վահան Փափազյանը եւ ՀՀ փախստականների հարցերի պետվարչության պետ Վլադիմիր Սովսիսյանը: Հայաստանն այս կազմակերպության անդամակցել է դեռեւս 1993 թվականի նոյեմբերի 23-ին: Վլադիմիր Սովսիսյանը համոզված է, թե գաղթի խնդիրն այսօր առավել քան երբեւէ առաջնային է մեր հանրապետության համար, քանի որ բացի փախստականներից, կան նաեւ բազմաթիվ միգրանտներ, այսինքն նրանք, ովքեր տարբեր պատճառներով Հայաստանից մեկնում են արտասահմանյան երկրներ: Գաղթի միջազգային կազմակերպության հետ համագործակցությունը բույլ կտա ստանալ նախեւառաջ օրենսդրական աջակցություն: Պրն. Նայիկի կարծիքով, կազմակերպության 52 անդամ երկրները տարբեր խնդիրներ ունեն:

Տես # էջ 2

ՄԻՆՍԿԻ ԽՈՒՄԲ

Թուրքիայի ներկայացուցչին արգելվեց մտնել Ղարաբաղ

Ամերիկացիները եւ ֆրանսիացիները խենք հրաժարվեցին

ԱՐԳԻՆԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ինչպես հայտնի է, նոյեմբերի 12-ին Բաքվից Երեւան ժամանեց ԵԱՀԽ Մինսկի խմբի պատվիրակությունը փոխնախագահ Պեր Անդերմանի գլխավորությամբ: Նույն օրը պատվիրակությանն ընդունեց Հայաստանի արտգործնախարար Վահան Փափազյանը, քննարկվեցին ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանն առնչվող խնդիրներ: Սակայն չի կարելի չնշել, որ հենց միայն ԵԱՀԽ պատվիրակության կազմում Թուրքիայի ներկայացուցիչ Սելիմ Կարաօսմանօղլուի ներկայությունն արդեն իսկ կարող է կասկածի տակ դնել ԵԱՀԽ պատվիրակության ներկա այցելության արդյունավետությունը: Բոլոր դեպքերում ակնհայտ է, որ Թուրքիան, որը փաստորեն բացահայտ կողմնակալ դիրքորոշում է հանդես բերում ղարաբաղյան հակամարտության խնդրում՝ շրջափակելով Հայաստանը, զենք, զինամթերք եւ ռազմական մասնագետներ ուղարկելով Ադրբեջան, չի կարող որեւէ մասնակցություն ունենալ ցանկացած խաղաղարար առաքելության: Պատահական չէ, որ ԼՂՀ իշխանությունները բազմիցս հայտարարել են, թե խոսք անգամ չի կարող լինել որեւէ խաղաղարար նախաձեռնության մասին, երբ դրան մասնակցում է նաեւ Թուրքիան: Ինչ էլ:

Եւ ահա երեկ ԵԱՀԽ պատվիրակությունը մեկնեց Ստեփանակերտ: Սակայն, ինչպես տեղեկացանք Հայաստանում ԼՂՀ ներկայացուցչությունից, ԼՂՀ իշխանությունները հրաժարվեցին արտոնել Կարաօսմանօղլուի մուտքը Ղարաբաղ:

Տես # էջ 2

ՀԲԸՄ

Բարեգործականի համագումարը նոր լիցք կտա հայրենի ծրագրերին

ՏԱԹԵՎԻԿ ՄԱՆՍՈՒՐՅԱՆ

«Սա մեր սովորական, երկու տարին մեկ անգամ անցկացվող անդամական ընդհանուր ժողովն է, որն առաջին անգամ է գումարվում Հայաստանում, քանի որ կոմունիստական ռեժիմի օրոք նման ծրագրի իրականացումն անհնարին էր», երեկ ասաց ՀԲԸՄ նախագահ Լուիզ Սիմոն Մանուկյանը, որն այս օրերին համագումարի կազմակերպման վերջին աշխատանքներն է տանում: Նրա կարծիքով, Հայաստանում ՀԲԸՄ-ի համագումարի անցկացումը կարեւոր է նաեւ այն իմաստով, որ Միությունն իր ամենամեծ ծրագրերից մեկը իրականացնում է Մայր հայրենիքում: «Արմենիա» հյուրանոցում, որը հյուրընկալում է ներկաներին, ժամանել են 18 երկրներից ժամանած Բարեգործականի 300-ից ավելի անդամներ, իսկական եռուզեռ է տիրում:

Տես # էջ 2

ՏԱՄԱՌՈՏ

Պանամայի «արտասահմանյան նվեր» Սեդրասին

Պանամայի կառավարությունը որոշում է ընդունել քաղաքական ապաստան տրամադրել Հաիթիի զինվորական վարչակազմի նախկին ղեկավար Ռաուլ Սեդրասին: Այս մասին հաղորդել է Պանամայի արտաքին գործերի նախարարությունը: Սպասվում է, որ հինգշաբթի օրը Սեդրասը Պորտ օ'Պրենսից այդ երկիր կտեղափոխվի ԱՄՆ-ի ռազմական ինքնաթիռով:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Բուտրոս-Ղալի. «Խաղաղապահ գործողությունների միջոցներ չունենք»

Միավորված ազգերի կազմակերպության կանոնիկ բյուջետային միջոցները կբավարարեն մեկ ամսից էլ պակաս, իսկ խաղաղապահ գործողությունների համար ֆինանսական միջոցներ առհասարակ այլեւս չկան: Այս անմխիթարելի խոստովանությամբ չորեքշաբթի օրը ՄԱԿ-ի ընդհանուր ժողովի 49-րդ նստաշրջանում հանդես է կավ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Վրաստանում նոր կուսակցություն

ԹԲԻԼԻՍԻ, 13 ՆՈՅԵՄԲԵՐ, ՍՆԱՐԵ: Վրաստանի քաղաքական բեմում հայտնվել է նոր կուսակցություն՝ երկրի տարածքային ամբողջականության պահպանման ազգային ազատագրական ճակատ, որի հիմնադիր ժողովը կայացավ նախորդ օրը Թբիլիսիում: Ինչպես հայտնեցին «Սնարե»-ի բըրաբկցին, նոր կազմակերպության նպատակն այն է, որ պետք է վերականգնել Աբխազիայում նրանց մշակույթի ազատագրական ճակատը. կարծում են, որ պետք է ընտրել երկրի պաշտպանության նախկին նախարար, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Թենգիզ Կիտովանին:

ԱԿՆԱՐԿ

Վրաստանի խորհրդարանը մեղադրում է ռուսական խաղաղարար ուժերին

ԹԲԻԼԻՍԻ, 13 ՆՈՅԵՄԲԵՐ, ՍՆԱՐԵ: Վրաստանի խորհրդարանը հայտարարություն ընդունեց, որտեղ աբխազական կողմին մեղադրեց վրաց-աբխազական հակամարտության կարգավորման գործում խափանարար գործողություններ իրականացնելու համար: Փաստաթղթում ասվում է, որ աբխազական կողմի այդպիսի գործողությունները կատարվում են ռուսական խաղաղարար ուժերի կողմից հովանավորությամբ: Այդ պատճառով Վրաստանի խորհրդարանը հակամարտության գոտում լարվածության հետագա աճման ամբողջ պատասխանատվությունը դնում է խաղաղարար ուժերի ղեկավարության վրա եւ պահանջում տարածաշրջանում կարգավորման ընթացքում անհրաժեշտ միջոցառումների իրականացում: Հայտարարության տեքստն ուղարկվել է Մոսկվա, որտեղ քննարկվում է հակամարտության քաղաքական կարգավորման մասին բանակցություններ, եւ Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինին ու Վրաստանում Ռուսաստանի դեսպան Վլադիմիր Զենկովին:

Մոսկվա. Իրաքի դեսպանը բողոքում է Արեւմուտքից

ԵՐԵՎԱՆ, 18 ՆՈՅԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: ԱՄՆ-ը չի դադարեցնի ռազմական տեխնիկայի եւ զինուժի զանգվածային փոխադրումները Պարսից ծոցի շրջան, հայտարարել է ԱՄՆ զինված ուժերի շտաբի պետ գեներալ Ջոն Շալիկաշվիլին:

Նոյեմբերի 12-ին իրաքյան զորքերը եւ լին քուվեյթյան նախնական դիրքերը: Նախնական կուտակումները պայմանավորված էին Իրաք Քուվեյթ սահմանին զինվարժությամբ: Նոր անցկացնելու նպատակով, հայտարարել է Ռուսաստանում Իրաքի դեսպան Ֆ. Ջուման մամուլի ասուլիսում: Նրա կարծիքով, Իրաքն իրավունք ունի իր հայեցողությամբ տեղել իր զորքերի տեղափոխման եւ ուսուցման խնդիրները: Իսկ երբ չվերացվի Իրաքի տնտեսական շրջափակումը, տարածաշրջանը հետագայում կշարունակի ենթարկվել ցնցումների ու ճգնաժամերի: Նա, ով գանկանում է խաղաղություն ու կայունություն Մերձավոր Արեւելքում, պետք է լուծի այն ճշմարտությունը, որ իրաքյան ժողովուրդը չի կարող եւ չի ուզում մեռնել սովից, ընդգծեց դեսպանը: Պաշտոնական Բաղդադի կարծիքով, ստեղծված ճգնաժամի առաջին պատասխանատուն նախեւառաջ ԱՄՆ-ն է եւ մի շարք արեւմտյան տերություններ, քանզի հենց նրանք են ուժով իրավիճակը եւ միջամտում Իրաքի գործերին: Ռուսաստանն առայժմ դեռ մնում է Իրաքի հնարավոր դաշնակիցը, առավել եւս, որ վերջին 4 տարիների ընթացքում Իրաքի տնտեսական շրջափակման հետեւանքով Ռուսաստանի վնասը կազմում է 30 մլրդ դոլար: ՌԸ

ԸՐՋԱՆ

Անարեկչության դեմ Թուրքիան պայքարում է պետական ահաբեկչությամբ

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 13 ՆՈՅԵՄԲԵՐ, ՍՆԱՐԵ, ԲԻԶՆԵՍ ՏԱՍՍ: Թուրքիայի կառավարությունը պետական ահաբեկչության մեթոդներ է կիրառում քրդերի դեմ, երեկ հաղորդել է «Վաշինգտոն փոստ» թերթը, մեջբերելով Թուրքիայի ներքին գործերի նախարար Ն. Մենզիրի հայտարարությունը:

Կառավարական զորքերը հարյուրավոր գյուղեր են հրկիզել երկրի հարավ-արեւելքում, եւ անօրեւաններին ռազմական տեղահանվածների թիվն այստեղ հասել է 2 միլիոնի, հայտարարել էր նախկին արտաքին գործերի նախարար Հիքմեթ Չեթինը Թուրքիայի TRT հեռուստատեսությամբ: այսօր հարավ-արեւելքում ռազմական ամբողջ տարածքում, մարտերի ընթացքում սպանվել են 34 հազար «ահաբեկիչներ» եւ 8 հազար զինծառայողներ: Ռազմական գործողությունների հիմնական վայրն է դարձել Թունջելի լեռնային նահանգը, որտեղ գտնվում են ՔԲԿ-ի բազմաթիվ ջոկատներ, որոնց մի մասն այնտեղ է թափանցել Սիրիայից, Իրաքից եւ Իրանից: Թունջելիում բարձրացած ռազմական ընթացքում կառավարական գործողությունների ընթացքում աստղի մեծ ոճրագործություն կատարվեց նաեւ մի քանի տասնյակ գյուղերի, որ բնակիչները ներգաղթել էին Իրանին սահմանակից նահանգներ ու այլ քաղաքներ:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ՀԲԸՄ

Բարեգործականի համագումարը նոր լիցք կտա

Սկիզբը էջ 1

Սպասարկող անձնակազմի անդամներից ոմանք մտավախություն ունեն, թե չեն հասցնում սպասարկել հյուրերին: Թեեւ հյուրերը, որոնց հետ կարելի է հանգիստ զրուցել հյուրանոցի առաջին հարկի ճեմասրահում, բավականին ուրախ եւ գործնական տրամադրություն ունեն: «Այս համագումարը մեզ համար պատմական նշանակություն ունի, նաեւ որ առաջին անգամ արտասահմանի ամենակարեւոր բարեգործական կազմակերպությունը, որն արդեն իսկ մեծ ներդրում ունի Հայաստանում, իր անդամների միջոցով մոտիկից կծանոթանա ծրագրերի իրականացմանը», ասաց ՀԲԸՄ Կենտրոնական վարչական ժողովի քարտուղար Պերճ Սեդրակյանը: Ուրախ ենք, շարունակեց նա, որ այս համագումարին ներկայանում ենք մեծացած դրամագլխով եւ երկամյա հաջող աշխատանքների հանրագումարով»: Իսկ ՀԲԸՄ-ի փոխնախագահ Հայկազուն Ուզունյանը ավելացրեց. «Հայաստանի անկախության հռչակումից հետո ՀԲԸՄ-ի համար իրական պատասխանատվություն էր գալ եւ Հայաստանի մեջ իր ներկայությունը հաստատել, հայ ժողովրդին այն հավաստը տալ, որ Բարեգործականը միշտ եղել է հայրենիքի կողքին եւ միշտ շարունակի մնալ նրա հետ»: Կիպրոսի Բարեգործականի ներկայացուցիչ Հրայր Սանուկյանը համոզված է, թե համագումարի աշխատանքային օրակարգը կարող է սովորականից ոչնչով չտարբերվել, բայց Երեւանում նման ժողովի անցկացումը անշուշտ կփոխի խնդիրների նկատմամբ ունեցած զգայական մոտեցումը:

«Սա ամենալավագույն առիթն է, որպեսզի Բարեգործականի յուրաքանչյուր անդամ ինքը գա եւ ականատես լինի ՀԲԸՄ-ի ներդրումներին եւ հայրենիքի մեջ կատարված վերելքին», ասաց Բեյրութի ՀԲԸՄ-ի կրթական հանձնախմբի անդամ Արշալույս Թուքունջյանը: Նրա ասելով, սփյուռքում երկու իրարամերժ կարծիքներ կան Հայաստանի մասին. թե սովամահ մուրացկանների եւ թե լավ փացացված հարուստ, ճոխ սեղաններով առատ մարդկանց մասին:

«Բոլորն էլ չափազանցված են», ասաց Արշալույս Թուքունջյանը: Նա մեծ փոփոխություն համարեց օդանավակայանում եւ «Արմենիա» հյուրանոցում ցույց տրվող սպասարկման բարձր մակարդակը, որն ինքնին խոսում է առաջին նվաճումների մասին: «Համագումարը ավելի կխանդավառի սփյուռքի հայերին, որպեսզի նոր գումարներ ներդնեն հայրենիքում, իսկ հայաստանցիները կզգան, որ մենք իրենց կողքին ենք ոչ թե խոսքով, այլ գործով», ասաց նա: Եւ այսպես, ՀԲԸՄ համագումարը տեղի կունենա հոկտեմբերի 15-ին, կառավարության նիստերի դահլիճում, իսկ մինչ այդ շարունակվում է նորանոր պատգամավորների ժամանումը, իսկ նրանց իջեւանատեղին «Արմենիա» հյուրանոցը, արդեն ստացել է տոնական տեսք՝ զարդարվելով այն երկրների դրոշներով, որտեղ գործում են ՀԲԸՄ-ի մասնաճյուղերը:

■ *Շինարարությունն աղետի գոտում: 1994 թ. ընթացքում աղետի գոտում նախատեսված է յուրացնել 2210.7 մլն. դրամի կապիտալ ներդրումը. առաջին 8 ամիսներին յուրացվել է 1396.3 մլն. դրամ կամ տարեկան պլանի 63.2 տոկոսը: Այդ տարվա ընթացքում նախատեսված է շահագործման հանձնել 64.8 հազար քմ. ընդհանուր մակերեսով բնակելի շենք, 322 աշակերտական տեղով հանրակրթական դպրոց, 72 տեղով մանկապարտեզ, 50 մահճակալով հիվանդանոց եւ մեկ հերթափոխում 100 հաճախումով պոլիկլինիկա: Հանձնված օգտագործման ամիսներին գործարկվել է 32.2 հազար քմ ընդհանուր մակերեսով բնակելի շենք (49.7 տոկոս): ՀՀ վիճակագրությունից հայտնում են, որ աղետի գոտու վերականգնման ծրագրի Համաշխարհային բանկի տրամադրած վարկի հաշվին նախատեսված 2861.2 հազար ԱՄՆ դոլարի կապիտալ ներդրումների դիմաց առաջին 7-ամիսներին կատարվել է 1355.8 հազար դոլարի կանխավճարում, իսկ փաստացի կատարողականը առաջին 8 ամիսներին կազմել է 415.1 հազար դոլար: «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով աղետի գոտում շահագործման է հանձնվել 8.2 հազ. քմ բնակմակերես:* ԵՏ

Սկիզբը էջ 1

Ըստ որում «Փաստ» գործակալությունը հաղորդում է, թե ըստ ԼՂՀ արտգործնախարարի օգնական Մանվել Սարգսյանի, իրենք նախապես այդ մասին երկու անգամ նախազգուշացրել էին խմբին՝ ներկայացնելով համապատասխան բացատրություններ: «Այստեղ էլ Հայաստանի արտգործնախարարության խողովակով ստիպված եղանք իրենց հասցնել մեր չփոփոխված դիրքորոշումը, նշեց պրն. Սարգսյանը, որից հետո մի քանի երկիր, ԱՄՆ-ը անգամ դեսպանության միջոցով հայտարարեցին, որ եթե Թուրքիայի ներկայացուցչի մուտքն Արցախ չարտոնվի, իրենց ներկայացուցիչներն էլ այնտեղ չեն մեկնելու»: Ի դեպ, ԵԱՀԽ Երեւան ժամանած պատվիրակության հետ հանդիպել է նաեւ այս օրերին Հայաստանում գտնվող ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռոբերտ Քոչարյանը եւ բացատրել մուտքի արտոնագրի մերժման պատճառները: Եւ այնուամենայնիվ, ի համերաշխություն իրենց թուրք կոլեգայի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի ներկայացուցիչները հրաժարվել են մեկնել Ստեփանակերտ: Մինչդեռ ակնհայտ է, որ ԼՂՀ իշխանությունների քայլը պարզապես պատասխանն էր այն միջադեպի, երբ Թուրքիայի իշխանությունները հրաժարվեցին «Հելսինկյան նախաձեռնություն» կազմակերպության Ղարաբաղի ներկայացուցչին Թուրքիա մտնելու արտոնագիր տալ: Եւ այսօր ԱՄՆ-ը եւ Ֆրանսիան, Թուրքիայի այդ քայլը դատապարտելու փոխարեն, իրենց համերաշխությունն են հայտնում Թուրքիայի ներկայացուցչին: Ըստ Մանվել Սարգսյանի, «Նման կեցվածքը հուշում է, որ այստեղ առկա են այլ շահեր, եւ կարելի է բարեւ արձանագրել, որ խաղաղարար առաքելությունը տվյալ դեպքում ստորադասվում է աշխարհաքաղաքական շահերին, մինչդեռ մենք կցանկանայինք գործ ունենալ անաչառ միջնորդության հետ»:

ՇՐՋԱՆ

Թուրքիայի ներկայացուցչին արգելվեց մտնել Ղարաբաղ

Ամերիկացիներն ու Ֆրանսիացիները իրենք հրաժարվեցին

Միաժամանակ, ինչպես տեղեկացանք պատարագյան աղբյուրներից, երեկ ԵԱՀԽ պատվիրակությունը ժամանեց Ստեփանակերտ եւ մի շարք հանդիպումներ կունենա ԼՂՀ ղեկավարների հետ: Նախատեսվում է, որ կքննարկվեն միջազգային խաղաղարար ուժերի խաղաղապահ ծրագրին մասնակցելու հետ կապված մի շարք կոնկրետ խնդիրներ: Հետաքրքիր է, որ այս ամենը տեղի է ունենում այն ժամանակ, երբ Մոսկվայում հայ-ադրբեջանական բանակցությունները փորձագետների մակարդակով վերսկսվել են, եւ դրանց հաջող ավարտի դեմքերը վկայում են, որ ԵԱՀԽ ներկա պատվիրակության առաքելությունը հաջողության հասնելու քիչ հավանականություն ունի, ինչը կարող է ազդել նաեւ մոսկովյան բանակցությունների ընթացքի վրա:

Ա. Բ.

ԵՐԵՎԱՆ

Ժողովրդագրական ընթացքի կարգավորումը ռազմավարական նշանակություն ունի

ԱՄՆ-ում ստորագրվեց համագործակցության նոր համաձայնագիր

Սկիզբը էջ 1

Բայց, ըստ նրա գնահատականի, ոչ միայն իրենք կարող են օգնել, այլեւ Հայաստանն ինքը կարող է մեծ ներդրում ունենալ Գաղթի միջազգային կազմակերպության աշխատանքներում: «Մենք շատ բան ունենք սովորելու ձեզանից, քանզի Հայաստանի խնդիրները տարբերվում են այլ երկրների ունեցած խնդիրներից», ասաց նա:

Միաժամանակ նա նշեց, թե ԳՄԿ-ն որպես կանոն ֆինանսական կազմակերպություն չէ, բայց անդամակցություններից գոյացած գումարները ու այլ միջազգային կազմակերպություններից ու կառավարություններից ստացված գումարները կարող է օգտագործել հայ կարեւոր ծրագրերի իրականացման նպատակով: Որպես համագործակցության օրինակ նշվեց այն փաստը, որ ըստ Հայաստանում գտնվող 6 հազար ափխազահայերը, իրենց ցանկությամբ կտեղափոխվեն Ափխազիա, ինչի մասին ընդհանուր համաձայնություն են եկել նաեւ Վրաստանն ու Ափխազիան: Ռուսաստանից Հայաստան, իսկ հետո Լեռնային Ղարաբաղ անվճար կտեղափոխվեն իրենց բնակավայրից հեռացած ղարաբաղցիները: Վլադիմիր Մովսիսյանը նշեց, թե իրեն ավելի շատ անհանգստություն է պատճառում ոչ թե արտաքինը, այլ ներքին տեղաշարժը: Նրա ասելով, ի տարբերություն մեր հարեւան հանրապետությունների, որտեղ գյուղական բնակչությունը 47 տոկոս է, մեզ մոտ հասել է 38 տոկոսի: Դա՛ այն դեպքում, երբ 50-ական թվականներին քաղաքային եւ գյուղական բնակչության թիվը հավասար էր եղել: «Ժողովրդագրական ընթացքների կառավարումը խոշոր նշանակություն ունի», ասաց պրն. Մովսիսյանը եւ հայտնեց, թե շուտով կառավարության համակարգում փախստականների հարցերի վարչությունը կվերափոխվի գաղթի պետական ծառայության:

«Դա ունի ոչ միայն ազգային, այլեւ սոցիալ-տնտեսական, - քաղաքական, ռազմավարական նշանակություն», ասաց նա:

Պրն. Նայթինգեյլի ասելով, այս տարի դեկտեմբերին Հելսինկիում կայանալիք միջազգային սեմինարում, որին կմասնակցի նաեւ Հայաստանը, կքննարկվեն փախստականության հարցեր: Մինչ այդ, Ժնեւում կայացած ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր կոմիսարիատի հանդիպմանը, որին մասնակցել է նաեւ Վլադիմիր Մովսիսյանը, ընդունվել է Հայաստանի երկու առաջարկը. նախ՝ տներ կառուցել Հայաստանում գտնվող փախստականների համար, որոնք իրենց բնակավայրերը վերադառնալու ցանկություն չունեն եւ հետո նրանց համար ստեղծել աշխատատեղեր:

Ինչ վերաբերում է գաղթի ընթացքներին, ապա Վլադիմիր Մովսիսյանը համոզված է, որ ապաշրջափակումից հետո կլինի վերադարձ, շատ արտագաղթածներ կվերադառնան հայրենիք, իսկ նրանք, ովքեր կցանկանան մնալ այլ երկրներում աշխատելու, կարող են օգտագործել գաղթի ծառայության հնարավորությունները:

ՏԱԹԵՎ ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

Բանակցությունների նոր փուլ ՄՎՖ-ի հետ

Երկշաբաթյա ընդմիջումից հետո, հոկտեմբերի 12-ին, Երեւանում վերսկսվեցին բանակցությունները ՀՀ կառավարության եւ Միջազգային վալյուտային ֆոնդի պատվիրակությունների միջեւ: Հայաստանի պատվիրակությունը ղեկավարում է Հրանտ Բագրատյանը, ՄՎՖ-ինը՝ ֆոնդի եվրոպական վարչության հարավային բաժանմունքի պետ Մոհամեդ Շադմանը:

Կառավարության մամուլի ծառայությունից տեղեկացրել են, որ քննարկման հիմնական նյութը անդեֆիցիտ բյուջեի հիմքեր ու վճարային հաշվեկշիռ ապահովելու խնդիրն էր եւ այս առնչությամբ՝ հացի գների, էլեկտրաէներգիայի սակագների փուլային ազատականացման, արտոնությունների վերացման, աշխատավարձի բարձրացման տեմպով եւ այլ միջոցներով փոխհատուցումների տրամադրման եւ մի շարք այլ հարցեր:

Արձանագրվել է մոտեցումների մերձեցում եւ որոշվել առաջիկա օրերին շարունակել քննարկումները լիակատար փոխհամաձայնության հասնելու համար, համապատասխան տեխնիկական հուշագիր ստորագրելու դեպքում դեկտեմբերի կեսերին այն կներկայացվի Միջազգային վալյուտային ֆոնդի տնօրենների խորհրդի հաստատմանը, որին կհաջորդի Հայաստանին կայունացման վարկի տրամադրումը:

Բանակցություններին մասնակցում էին ՀՀ փոխվարչապետ Վիգեն Չիտեչյանը, ֆինանսների նախարար Լեւոն Բարխուդարյանը, էկոնոմիկայի նախարար Արմեն Եղիազարյանը, ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Բագրատ Ասատրյանը, հարկային պետական տեսչության պետի պաշտոնակատար Պավել Սաֆարյանը, ՀՀ կառավարության տնտեսագիտական վարչության պետ Աշոտ Ավետիսյանը: ԱՐՄԵՆՊՐԵՍ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

Երեւանում 25 հազար գործազուրկ

ԵՐԵՎԱՆ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Երեւանի զբաղվածության կենտրոնի հաղորդած տվյալների համաձայն, հոկտեմբերի 1-ի դրությամբ մայրաքաղաքում գրանցված է 25 հազար 294 գործազուրկ: Այդ թվի կարգավիճակ ունեցողների թվում գերակշիռ մեծամասնություն են կազմում կանայք, որոնց թիվը շուրջ 15 հազար է: Նպաստառու 3161 գործազուրկներից համապատասխան նպաստներ են ստացել 2472 մարդ:

Ինչ խոսք, սա գործազրկության ամբողջական պատկերը չէ: Երեւանում, անշուշտ, կան բազմաթիվ գործազուրկներ, որոնք չեն գրանցված զբաղվածության կենտրոնում:

Նշենք նաեւ, որ 6 գործազուրկներ կառավարությունից ստացել են նյութական օժանդակություն 427 դրամ ընդհանուր գումարով: Երբ նույնիսկ նրանցից յուրաքանչյուրին հասկացվեր այսքան գումար, սա այն չէր բավականացնի մարդկանց նվազագույն հոգսերի համար:

Երեւանում գոյություն ունեցող մոտ 40 հազար գործատուներից մայրաքաղաքի զբաղվածության կենտրոնին աշխատողի պահանջարկ են ներկայացնում միայն մի քանիսը: Հոկտեմբերի 1-ի տվյալներով, կա 1402 աշխատողի պահանջ, որից բանվորական ուժինը 1129 է: Ծառայողների թափուր տեղերի մեծամասնությունը մանկավարժական կոլեկտիվներում է: Առայժմ ներկայացված է 173 ծառայողի պահանջ:

Երեւանի զբաղվածության կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյանը տեղեկացրեց նաեւ, որ կենտրոնն իրականացնում է մասնագիտական ուսուցման կազմակերպում: Այսօրվա դրությամբ, նա պայմանագիր է կնքել մենեջմենթի վարչության հետ: Մենեջմենթի հաշվագծերում եւ շինարարական աշխատանքներում մասնագիտանում է 21 մարդ: Ըստ պայմանագրի, դրական գնահատականներն անցնելուց հետո նրանք անպայման կապահովվեն աշխատանքով:

Եղանակը Հայաստանում



■ *Ադրբեջանը կփորձի բեկում մտցնել ռազմական եւ դիվանագիտական ոլորտներում:* Հայաստանի Հանրապետական կուսակցության խորհրդի նախագահ Անդրանիկ Մարգարյանը գտնում է, որ Կասպից ծովի ընդերքից արդյունահանվող նավթի եւ դրա արտահանման խնդիրները շոշափում են Ռուսաստանի եւ Իրանի շահերը եւ, բնական է, որ նրանք պետք է լծակներ օգտագործեն այդ խնդիրները շահեկանորեն լուծելու համար: «Չի կարելի բացառել, որ խախտելով բազմամյա հրադադարը, Ադրբեջանը արտաքին աջակցությունը չեզոքացնելու համար կփորձի Արցախյան ճակատում հաջողությունների հասնել եւ բեկում մտցնել ռազմական ու դիվանագիտական ոլորտներում», վերջում ասաց Անդրանիկ Մարգարյանը:

ԵՏ

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Դ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (7 8852) 151065
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՅԱԿՈԲ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 529221
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE համակարգչային ծառայություն / 581841
Apple Macintosh
համակարգչային ծառայություն «Ազգ» թերթի
Azg armenian daily
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ԸՆԴԱՄ ԱՊՀ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Իշխանության ճգնաժամ Ղազախստանում

Վերջերս Ղազախստանում գործադիր իշխանության ճգնաժամը թեւակոխել է վճռական փուլ: Ղազախստանի Նախարարների կաբինետը հրաժարական տվեց, իհարկե, ոչ իր կամքով: Եվ սա միանգամայն հասկանալի է: Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւին միայն պատրվակ էր հարկավոր:

Տեղացի դիտորդների կարծիքով, նման կարեւոր պատրվակ դարձավ հանրապետության մայրաքաղաքի մոտ 40 խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների տնօրենների «հանրահայտ» նամակը, որը նախագահին էր ուղարկվել դեռ այս տարվա օգոստոսին: Այդ բաց նամակում տնօրենների կողմից, տնտեսության ներկայիս ծանր վիճակը բացատրելով կառավարության անբանիմացությամբ, խորհրդարանից պահանջում էր քննարկել եւ մինչեւ սեպտեմբերի 1-ն ընդունել իրենց առաջարկած մի շարք լուծումներ: Նամակում խոսվում էր ձեռնարկություններից գանձվող բոլոր հարկերի ընդհանուր գումարը 40 տոկոսի իջեցնելու, վարկային տոկոսները նվազեցնելու մասին, հաշվի առնելով բանկերի գործունեության վերահսկման առանձնահատկությունները: Նամակի հեղինակները նաեւ հայտարարում էին, որ հենց տնօրենների կորպուսն է այժմ հասարակության մեջ սոցիալական գնդումները զսպող փաստորեն միակ գործոնը: Իհարկե, նրա պահանջները չկատարվեցին Նախարարների կաբինետի կողմից, որը գլխավորում էր Սերգեյ Տերեշչենկոն: Սակայն, այդ բոլոր իրադարձությունները քաղաքական որոշակի երեւույթ ունեն:

Հանրապետության գործադիր մարմինների կարեւոր պաշտոններում ազգության անձանց նշանակումը մի շարք հարցերի առթիվ Ղազախստանի հանդեպ Ռուսաստանի դիրքորոշման որոշակի հակազդեցություն է: Երբ կարեւոր է պաշտոնը տրամադրել, տեղի ունեցավ հանրապետության գործադիր իշխանության կարեւոր պաշտոնների «ազգայնացում»: Անցել են այն ժամանակները, երբ Մոսկվան դրա համար պատասխանատվության կկանչեր Նուրսուլթան Նազարբաեւին, նրան մեղադրելով հանրապետությունում ինտերնացիոնալիզմի սկզբունքներից հեռանալու համար, որտեղ բնակչության 40 տոկոսը ռուսներ են: Իրենք ղազախները կազմում են նույնպես 40 տոկոս, իսկ մնացած 20 տոկոսը մյուս ազգությունների ներկայացուցիչներն են.

Ներկայումս իրավիճակը փոխվել է: Ռուսաստանի եւ նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետությունների հետ Ղազախստանը փոխհարաբերություններ է կառուցում միջպետական սկզբունքով: Այն բանից հետո, երբ ռուբլու միասնական գոտու ստեղծման հարցը հանվեց օրակարգից եւ անցյալ տարի շրջանառության մեջ դրվեց ազգային արժույթը՝ թենգեն (դոլարը 5 թենգե է), Նուրսուլթան Նազարբաեւը սկսեց առաջ քաշել Եվրասիական ընկերակցության վերաբերյալ իր գաղափարը: Ռուսաստանի ղեկավարության հավանությունը չստանալով, Նուրսուլթան Նազարբաեւն անցավ իր հաջորդ գաղափարին, որը վերաբերում էր միջինասիական հանրապետությունների միասնական տնտեսական տարածքին: Ամենայն հավանականությամբ, դա նրան տվելի մեծ չափով հաջողվեց, քանզի Ալմա Աթայում եւ Բիշքեկում այդ պետությունների ղեկավարների խորհրդակցություններ անցկացվեցին մի շարք հարցերի շուրջ: Պատահական չէ, որ Ղազախստանի նախագահը մեծ ուշադրություն է դարձնում իր միջազգային գործունեությանը: Նա ուզում է ամեն գնով դուրս գալ Ռուսաստանի այն դաժան ճնշման տակից, որի պայմաններում ներկայումս ապրում է Ղազախստանը:

Ռուսաստանը «ճնշում է» բոլոր բնագավառներում: Ամենազգայունը որպես վառելիքաէներգետիկ ճյուղն է: Ղազախստան կատարած իր այցելության ժամանակ Ռուսաստանի վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինը մի շարք կարեւոր համաձայնագրեր ստորագրեց Ղազախստանի վարչապետ Սերգեյ Տերեշչենկոյի հետ:

Ռուսաստանի հիմնական «պահանջն» այն է, որ հանրապետությունում արագորեն սկսվեն շուկայական բարեփոխումները: Բայց Ղազախստանում այդ բոլոր գործընթացները արգելակվում են, քանի որ հանրապետությունը գլխավորում են հիմնականում նախկին կուսակցական նոմենկլատուրայի ներկայացուցիչները: Ղազախստանի խորհրդարանի պատգամավորներից մեկի՝ Ալբերտ Չեռնիշեւի պաշտոնավոր արտահայտության համաձայն «մենք չափազանց շատ բան ենք ուզում Նազարբաեւի բերնից, սակայն նա չի կարող ճիշտ 180 աստիճանով շրջադարձ կատարել սոցիալիստական ժամանակների իր սկզբունքներից»:

Ռուսաստանի կողմից Ղազախստանի այդպիսի մեղմ մեկնաբանումը «ունի նաեւ այլ պատճառներ, որոնցից հատկապես արժե անդրադառնալ մեկին: Արդեն երկու տարի է, ինչ Ղազախստանը անգլիական «Բրիթիշ գեզ» եւ իտալական «Էջիպ» ընկերություններին առանձնահատուկ իրավունք է տվել բանակցելու նավթի ու բնական գազի վերաբերյալ հանքավայրերի շահագործման շուրջ: Դրա դիմաց նախատեսվում էր ստանալ 6 միլիարդ դոլար ներդրումներ: Բանակցությունները ողջ ամառ ընթացան այդ ընկերությունների համար այն բանից հետո, երբ Ռուսաստանը նրանց մերժեց իր տարածքով գազն անցկացնելու իրավունքը:

Վերջին հանգամանքը Կենտրոնական Ասիայի եւ Կովկասի շրջաններում հանգեցնում է Ռուսաստանի տարբեր նախարարությունների ու գերատեսչությունների տնտեսական միջամտության ընդլայնմանը: Մի կողմից, Մոսկվայի պաշտոնական ներկայացուցիչները որոշակի բաժին պահանջեցին Արեւմուտքի հետ նախկին խորհրդային հանրապետություններ Ղազախստանի եւ Ադրբեջանի կնքած էներգետիկ խոշոր գործարքներից, իրենց պահանջը պատճառաբանելով այն բանով, որ ռուս ինժեներներն այդ հանքավայրերը հայտնաբերել եւ մշակել են դեռ նախքան 1991 թ. ԽՍՀՄ-ի փլուզումը: Միեւնույն ժամանակ, Մոսկվայի կառավարական գործակալությունները խոչընդոտներ են ստեղծել գործարքների իրականացմանը, բառացիորեն փակելով Ռուսաստանի նավթատար համակարգը:

Ղազախստանի տեղացի վերլուծաբանների կարծիքով, «Ռուսաստանը տնտեսական գործոնն է օգտագործում էներգիայի արտադրությունը բարելավելու եւ նախկին խորհրդային հանրապետություններում իր ազդեցությունը պահպանելու նպատակով»: Հենց այդպես տնտեսական դաժան ձեւով է Ռուսաստանն ամրապնդում իր առաջնորդությունը: Նա հիանալի հասկանում է, որ երբ նավթը սկսի դուրս բերվել Ղազախստանից, այդ երկիրը քաղաքական անկախություն կստանա: Հենց դրա համար Ղազախստանի եւ Ռուսաստանի վարչապետներ Սերգեյ Տերեշչենկոյի եւ Վիկտոր Չեռնոմիրդինի բանակցությունների ժամանակ Ռուսաստանն առաջին անգամ պահանջեց գազի ու նավթի հանքավայրերի հանույթի իր բաժինը:

Այս բոլոր փաստերը վկայում են, որ Ռուսաստանն ի վիճակի է հետխորհրդային ամբողջ տարածքում իր ազգային շահերը պաշտպանել ամեն գնով, ընդունին չգործադրելով տնտեսական կամ քաղաքական մեծ ջանքեր:

ՌՈԶԱ ԿԱՐՐԻԵԼՅԱՆ
Պատմագիտության թեկնածու

ԳՐՈԶՆԻ

Չեչնիայում ռազմական դրություն

Ուկրաինացի ազգայնականները պատրաստ են օգնել Չեչնիային

Չորեքշաբթի գիշեր Գրոզնիում կայացավ Նախարարների կաբինետի եւ Անվտանգության խորհրդի համատեղ խորհրդակցությունը, որի ժամանակ նախագահ Ջոհար Դուդաեւը հրապարակեց Չեչնիայում ռազմական դրություն հայտարարելու մասին հրամանագիրը: Այն ուժի մեջ է երեկվա ժամը 9-ից: Հրամանագրին համապատասխան հանրապետությունում մտցվում է ելքի ու մուտքի հատուկ ռեժիմ, խստացվում են հասարակական կարգի ու ձեռնարկությունների պաշտպանությունը, գործողության մեջ է մտնում պարետային ժամը՝ ժամը 22-ից մինչեւ առավոտյան ժամը 5-ը: Կառավարության գործունեությունը նույնպես անցնում է հատուկ ռեժիմի: Այսուհետ նրա անդամները պետք է իրենց աշխատատեղերում գտնվեն շուրջօրյա:

Դիտորդների կարծիքով ռազմական դրության ռեժիմն իրականում կվերաբերի միայն նախագահին հավատարիմ ուժերի հսկողության ներքո գտնվող Գրոզնիին եւ հարակից սահմանամերձ տարածքներին:

Ի պատասխան ընդդիմության ղեկավարների, թե Դուդաեւի վարչակազմը հնարավոր է իշխանությունից հեռացնել բացառապես բանի ուժով, Ռուսլան Խասբուլատովը հայտարարել է. «Քանի ես այստեղ եմ, Չեչնիայում քաղաքացիական պատերազմ թույլ չեմ տա»:

Մյուս կողմից, Ուկրաինայի ազգային ասամբլեան եւ Ուկրաինայի ժողովրդական ինքնապաշտպանությունը (ՈՒԱԱ ՈՒԺՊ) մի հայտարարություն է հրապարակել, որտեղ ասվում է, որ ՈՒԱԱ ՈՒԺՊ-ն պատրաստ է անհրաժեշտության դեպքում Չեչնիայի Հանրապետությանը տրամադրել ռազմական եւ այլ օգնություն եւ նույնիսկ Չեչնիա ուղարկել իր զինյալ ստորաբաժանումները: Հայտարարության մեջ նշվում է նաեւ, որ «պաշտոնական Կիեւը մեկուսացվել է Չեչնիայում հակամարտության կարգավորման մասնակցությունից»:

ԱՐՄԵՆՊՐԵՍ, ՓԱՍՏ, ՆՏ

ՀԱՄԱՌՈՏ

ՆԱՏՕ-ի եւ Ռուսաստանի միջեւ առաջընթաց

ԲՐՅՈՒՍԵԼ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՆԱՏՕ-ի խորհուրդը նշեց Ռուսաստանի եւ ՆԱՏՕ-ի միջեւ համագործակցության ծրագրի մշակման «լավ առաջընթացը» եւ որոշեց Մոսկվայում դեսպանատանը կազմակերպել ՌԴ-ում դաշինքի լրատվական ներկայացուցչություն՝ իր տեսակի մեջ առաջինը: ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում գտնվող աղբյուրներից ծեսեցին, որ այդ առաքելությունը, որի պաշտոնական անվանումը դեռեւս չի որոշվել, բաղկացած կլինի երկու դիվանագետներից: Լրատվական գործունեությունը ամենայն հավանականությամբ չի սահմանափակվի ՆԱՏՕ-ի հետ ռուսական հասարակության ծանոթացմամբ: Ներկայացուցչությունը Բրյուսելի համար կլինի լրատվության սեփական աղբյուր՝ տեղեկանալու Ռուսաստանի կյանքի բոլոր կողմերի մասին:

Ժողովրդավարները անուններ են տալիս

ԵՐԵՎԱՆ, 18 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Վերջերս հիմնված Ռուսաստանի Դեմոկրատական կուսակցության համանախագահներ Լեւ Պոնոմարյովն ու Գալինա Ստարովոյտովան հոկտեմբերի 12-ին հայտարարեցին, որ իրենք պահանջում են կառավարության արմատական վերափոխումը, բայց առանց նրա հրաժարականի: Կառավարության կազմը, մեկնաբանեց Գ. Ստարովոյտովան, պիտի ընդգրկի տարբեր դեմոկրատական ուժերի ներկայացուցիչների: Տրվեցին կոնկրետ անուններ: ՌԴԿ-ի ներկայացուցիչները ողջունում են կառավարության կազմում Գայդարի, Ֆյոդորովի, Յավլինսկու եւ Խակամադայի ընդգրկումը:

ՃԳՆԱԺԱՄ

Աթալի. Ռուբլու անկումը կասեցնելու միակ ճանապարհը ներդրումներն են

ՓԱՐԻԶ, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՄՆԱՐՔ, ՌԻԱ: Ռուսաստանում արտարժութային սպեկուլյացիաներին դիմադրելը անիմաստ է, եւ կենտրոնական բանկի բոլոր փորձերը խառնվելու այս պրոցեսին միայն բարդացնում են այն, հայտարարեց ֆրանսիացի հայտնի տնտեսագետ Ժակ Աթալին: Մեկնաբանելով վերջին օրերին ռուբլու փոխարժեքի կտրուկ անկումը Ռուսաստանի արժութային բորսաներում, Ֆրանսիայի նախագահի նախկին խորհրդականը եւ մինչեւ վերջերս Զարգացման եւ վերակառուցման եվրոպական դրամատան ղեկավարը, իսկ այժմ ռուսական կառավարության խորհրդատու Աթալին ասաց, որ ազգային արժույթի կայունացման միակ ճանապարհը ներդրումները խթանող երկարաժամկետ միջոցառումներն են:

Ռուբլու կտրուկ անկումը կապիտալի արտահոսքի եւ բյուջետային ծեղքվածքի արդյունք է եւ դա նշանակում է, որ այն մեծ չափով կախված է ֆինանսների նախարարության վարքից եւ ոչ թե կենտրոնական բանկի, որը Աթալիի կարծիքով Ռուսաստանում արդյունավետ աշխատող միակ կառույցներից է: Նա նշեց նաեւ, որ ռուսական նավթային համալիրի արտադրանքի նախկին ծավալների դեպքում ռուբլու փոխարժեքի խնդիր չէր լինի: Սակայն այժմ, գտնում է Աթալին, կենտրոնական բանկի միջամտությունը միայն անարդյունք կծախսի արժութային պաշարը եւ ամեն դեպքում կբերի դրամական համակարգի ճգնաժամի:

ԱԴՐԲԵՋԱՆ

Ջալիլովի եւ Ռահիմովի գործում առաջխաղացում չկա

ԲԱՔՈՒ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Խորհրդարանի փոխխոսնակ Աֆիաղին Ջալիլովի եւ նախագահին կից հատուկ վարչության պետ Շամսի Ռահիմովի սպանությունների մասնակից լինելու կասկածով ձերբակալվել են երեք մարդ, սակայն քննչական խումբը դեռեւս չունի համոզիչ փաստեր նրանց մեղավորությունն ապացուցելու համար, եւ եթե առաջիկա 10 օրերի ընթացքում այդպիսի փաստեր չհայտնաբերվեն, ապա ձերբակալվածները ազատ կարձակվեն: Այս մասին հայտարարել է ազգային անվտանգության նախարարության (ԱԱՆ) օպերատիվ քննչության բաժնի պետ Ռ. Մամեդովը: Նա հայտնեց, որ օպերատիվ-քննչական խումբը ստուգում է տարբեր վարկածներ, սակայն ներկայումս ոչ մի հիմք չկա հաստատելու, որ հանցագործությունը քաղաքական է: «Ինչ վերաբերում է հանրապետության նախկին գլխավոր դատախազ Ալի Օմարովի եղբոր հանրահայտ հետաքննությանը, որտեղ նա փորձ էր արել լուսաբանել հետաքննության ընթացքը, ապա կարելի է ասել, որ նա անպատասխանատու հայտարարություն է արել, որը չունի ոչ մի հիմք եւ պետք է պատասխանատվություն կրի դրա համար»: Նրա խոսքերով, եղբորից առաջ գլխավոր դատախազը չխորհրդակցեց ոչ այդ գործը վարող ԱԱՆ քննիչի հետ եւ ոչ էլ այդ գործում ակտիվ մասնակցություն ունեցող դատախազության քննիչի հետ:

ՎՐԱՍՏԱՆ

Ռուբլու անկումն ազդեց ֆինանսների շուկայի վրա

ԹԲԻԼԻՍԻ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԲԻԶՆԵՍ ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Չնայած այն բանին, որ Վրաստանի ամբողջ տարածքում միակ վճարամիջոցը կուպոնն է, ռուսական ռուբլու փոխարժեքի աղետալի անկումն ուղղակիորեն ազդել է այդ երկրի ֆինանսական շուկայի վրա: Բանն այն է, որ այնտեղ հենց ռուբլին է կանխորոշում գնագոյացման հիմքը: Փորձագետների բերած մոտավոր տվյալների համաձայն ներկայումս Վրաստանում շրջանառության մեջ է գտնվում 300-500 մլրդ. ռուսական ռուբլի: Ռուսաստանում առկա կտրուկ արժեզրկումը զգալիորեն հարվածեց նախ եւ առաջ ռուբլի ունեցող բնակչությանը, ինչպես նաեւ այն ձեռնարկություններին ու կազմակերպություններին (իսկ դրանք հանրապետությունում մեծամասնություն են կազմում), որոնք թղթակցային հաշիվներ են բացել Ռուսաստանի բանկերում:

ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Թուրքիան Կրգըզստանի համար ունի առաջնային նշանակություն

ԲԻՇԿԵԿ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այսօր առավոտյան Կրգըզստանի նախագահ Ասկար Ակաեւը երկօրյա պաշտոնական այցով Թուրքիա է մեկնել: Անկարայում նա կհանդիպի Թուրքիայի Հանրապետության նախագահ Սուլեյման Դեմիրելի, վարչապետ Թանսու Չիլլերի, երկրի քաղաքական եւ հասարակական գործիչների հետ:

Թուրքիա մեկնելու նախօրյակին ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին տված հարցազրույցում Կրգըզստանի արտաքին գործոց նախարար Ռոզա Օտունբաեւան նշեց, որ երկու երկրների հարաբերությունները զարգանում են աշխուժորեն եւ հիմնվում են հավասարիրավունք համագործակցության վրա: «Թուրքիան Կրգըզստանի համար առաջնային նշանակություն ունի, հայտարարել է Օտունբաեւան: Այդ պատճառով մենք տրամադրված ենք երկարատեւ ու բարեկամական հարաբերությունների, քանի որ երկու երկրներն էլ ընտրել են ժողովրդավարությունն ու շուկայական հարաբերությունները»:

Անցյալ տարի Անկարան Բիշքեկին տրամադրեց 20 մլն. դոլար արժողությամբ մարդասիրական օգնություն: Բացի այդ թուրքական «Էմլակ բանկը» 75 մլն. դոլարի վարկ էր տրամադրել Կրգըզստանում միջին եւ փոքր գործարարության զարգացման համար: Թուրքիան պատրաստվում է 3-րդ վարկը տրամադրել, այս անգամ 25 մլն. դոլար: Կրգըզստանում գործում են 70-ից ավելի կրգըզա-թուրքական համատեղ ձեռնարկություններ: Հանրապետությունում ստեղծվել են մասնավոր թուրքական դպրոցների ցանց, երկու լիցեյ, բացվել է զարգացման գործակալություն:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

հրատապ

Հանրապետությունում քաղաքական իրադրությունն աստիճանաբար շիկանում է: Եւ չի կարելի դրա վրա աչք փակել: Ընդդիմադիր լրատվամիջոցների էջերում ամբողջ կծիկն առկա է: Թվում է՝ մենք յոթ ծովից անցնելով հաղթահարել ենք բոլոր խոչընդոտները, մեր ճանապարհին ցրիվ տալով բացարձակապես ամեն ինչ: Տեղին են բանաստեղծի հեսեյան խոսքերը. «Եւ խիճակառության բեկորների վրա կգրեն մեր անունները»: Մենք այս անեծքին ենք հասել ժողովրդավարական պետության կառուցման մեր ճանապարհին:

Մեզ մոտ ժողովրդավարությունը շատ ցածր է, գրեթե ճանկին: Քաղաքական կառույցը համապատասխանում է ունեցած պետության կառույցին: Եւ այս առումով հարևանների՝ Վրաստանի և Ադրբեջանի համեմատությամբ մեր բախտն անշահ բերել է: Շահեն էլ գոս ազգային են, քանզի երկրի բնակչությունը միատարր է, հայկական: Մեր ժողովրդի դարավոր երազանքը վերջ երկխոսությունը: Բայց հենց որ է ընդդիմադիրների հետ կապված իրավիճակը, մեղմ ասած, բարդացավ, ամեն ինչ անճանաչելիորեն փոխվեց: Գործի դրվեց չտեսնված ուժեղ գործոն քաղաքական բանբասանքը:

Լուրջ, իսկ երբեմն էլ ուժերից վեր հոգսերի մեջ թաղված, սակայն մեր ժողովրդական զանգվածները կարող էին մոռանալ քաղաքական գործիչների մասին, եթե չլինեին այդ բանբասանքները:

Երկու կողմերի՝ իշխանությունների և ընդդիմության միմյանց դեմ հասցրած վարկաբեկիչ նյութերի քանակը շատ մեծ էր, մանավանդ որ երկու ճամբարների հիմնական կազմը անցյալում նույն ճամբարից էր եղել: Ընդդիմությունը ջանում էր իր մոտ հայտնված վարկաբեկիչ նյութերը գործի դնել նպատակին, այսինքն իշխանությունը հասնելու՝ համար, իսկ իշխանություններն իրենց հերթին չէին ուզում որևէ բան «ծրի» զիջել: Այս ամբողջ իրավիճակը կարգավորվում էր հիմնականում ներ, առա պաշտպանողական ներկա կողմերի «բախտը չի բերի»: Այնս թե ինչու հրապարակում «դեկավարների» հիմնական մասը խորհրդարանի պատգամավորներն են: Անհայտ հավանականությամբ, նրանց կարծիքով, նոր «վերածնունդը» հնարավոր է նաև նրա միջոցով: Համենայնդեպս, այս տեղեկատվությունը կարելի է ասել 1994 թ. նախաձեռնությունից սկսած: Իսկ բանբասանքն այժմ արդեն վերածվել է հայկական ծնունդ այն հրապարակում, որտեղ 1988 թ. սկսվել էր մեր անկախության գործընթացը:

Հանրապետության քաղաքական ամբողջ ընտրախավը համակված է ոչ միայն իր ընդդիմախոսներին, այլև «դաշնակիցներին» վարկաբեկելու անզուսպ ցանկությամբ, քանզի որքան ավելի թույլ է կողքին կանգնածը, այնքան ուժեղ է ինքը: Ծավալվում է շատ դաժան պայքար: Հայտնվել են նաև բոլոր քաղաքական ուժերին ուղեկցող «խաղաքագետներ», որոնք քաղաքական մի ճամբարից հրչելով մյուսը (կամ նաև «վայ-քաղաքագետներ», վերջին երեք տարում արդեն չորրորդ ճամբարն են մուտք գործում), համախմբելով հիմնականում վարկաբեկիչ «նյութեր», իրենց ելույթներով ոչ միայն սրում են առանց այդ էլ շատ դաժան քաղաքական պայքարը, այլև հրբրացս ստեղծում անվստահության մթնոլորտ, իսկ որ ամենավտանգավորն է, բոլոր քաղաքական ուժերին հեռացնում են գաղափարախոսական հարցերի շուրջ երկխոսություն վարելու փորձերից:

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստան. Համընդհանուր անվստահության մթնոլորտ...

ի վերջո իշխանություն է դարձել: Ժողովրդական շարժման ալիքի վրա կառավարող քաղաքական ընտրախավը անդրոյ կերպով, ներկայիս ընդդիմության առաջ դեկավարների հետ համատեղ անկախության հասավ միջազգային իրավունքի բոլոր չափանիշներին համապատասխան: Ժողովրդավարական պետության կառուցման կուրսը ներադրում էր նաև ընդդիմության ծագում: Իշխանությունների ծագումնաբանությունն առաջին իսկ օրերից բնորոշվում հետևյալ սկզբունքով, որով ավելի խիստ է՝ սկզբում նախկին կոմունիստական իշխանությունների, ապա ընդդիմախոսների ինքնապաշտպանությունը. այնքան բարձր է քաղաքական մշակույթը: Դեռ չեն մոռացվել «սոցիալիստական» խորհրդարանում հակաշխարհն մեծամասնության դեմ այսօրվա իշխանությունների ընդդիմության մի քանի ներկայացուցիչների պայքարի փաստերը:

Ավելորդ չէ հիշեցնել, թե այդ աննեն ինչպես էր ստելի տանկում մեզ մոտ մի քանի տարի առաջ: Համառոտակի դա հետևյալ տեսքն ուներ. նոր ժողովրդավարների (օրինակ Ա. Մանուչարյանի) բացառություն ելույթներ որևէ մեկի կամ որևէ բանի դեմ (ԱԷԿ, «Նաիրիտ») և խորհրդարանի շենքի մոտ հավաքված «ժողովրդական ձայն» ի պաշտպանություն նրանց կարծիքների: Այս ամբողջ պատկերն ամրապնդվում էր նաև ֆիզիկական ճնշմամբ (ժողովրդի ընտրյալներին ծեծելով): Այժմ ոչ ոք չի ուզում դա վերհիշել, այնինչ արժե մտաբերել: Գուցե այդ դեպքում ամենքի համար պարզ կդառնա, թե ինչ է սերմ ունենում հիմա:

Ընդդիմությունը բուռն էության լույս աշխարհ եկավ այն ժամանակ, երբ բազմարիվ «ընկերներ» վերածվեցին «պարոնների», և բոլոր «ժողովրդավարների» համար տեղերն անբավարար եղան:

Իշխանությունների մերօրների որչ փնտրելու ընդդիմությունը կերառեց արդեն իշխանությունների ձևաչափը: Իշխանության դեկին համար թե ընդդիմությունը և թե իշխանությունները պատրաստ էին «սուր պայքար» ունենալ: Բանն այնքան դեկլարատիվության կար, ամեն ինչ ջարդված էր, լսելի և տեսնելի էր երկու կողմերի «կոշտ» ծեծնարկված կայացին փոխանցումներով: Դեգրադության «աղմուկի» անհաջողությունը գաղջերաց ստվարաբար զիջում էր առավել հիմնականում «անզորություն նախարարների» կամ էլ ավելի ցածր կարգի պաշտոնյաների: Վերջին երեք տարում իշխանությունների և ընդդիմության այդ կարգի «փոխզործողության» շնորհիվ «ոտքի կանգնեցին» և կազմավորվեցին քաղաքական կուսակցություններ և ուժեր:

Այսօրվա դրությամբ քաղաքական բանբասանքը լիովին կազմավորվել է մեր հասարակության քաղաքական զարգացման մշավոր լծակներ: Հասարակությունը պառակտված է մանր մասերի: Ինչպես իշխանությունները, այնպես էլ ընդդիմությունը հաճախակի մասնակից են դառնալ իրենց կողմնակիցների շրջանակի ընդլայնման գործողություններին: Դրա հետևանքով մեր հանրապետությունում կան մտավորականության մի քանի կազմակերպություններ, որոնք կանգնած են տարբեր քաղաքական դիրքերում: Այնինչ մեր մտավորականության հոգսերը նույնն են: Մեր հանրապետության կանանց 26 հասարակական կազմակերպությունների մի մասը մոտ է կանգնած իշխանություններին, մյուս մասը՝ ընդդիմությանը: Կարելի է թվարկել նաև այլ փաստեր:

Ընդհանուր առմամբ «մասնավորման» այդ գործընթացը իր ամենադաժան փուլը կբեւակոխի այն ժամանակ, երբ յուրաքանչյուր մարդ դիտվի որպես առանձին քաղաքական «կազմակերպություն»: Այդ ամենի դիմաց մեր բազմաչարչար ժողովուրդը քաղաքական ընտրախավին վարձահատույց է լինում անվստահությամբ և օտարվածությամբ: Եւ երբ հանրապետությունում քաղաքական ուժերի ինչ-ինչ բացահայտման հարցումների արդյունքները ուրախացնում են հարցման մասնակիցների նշած ուժերից որևէ մեկին, ապա մեզ այդ արդյունքները միայն վշտացնում են, քանզի քաղաքականապես գրեթե 100 տոկոսանոց ակտիվ մեր ժողովուրդը դարձել է անտարբեր և անվստահ (հարցման համաձայն մոտ 60 տոկոսը):

Հետևությունը պարզ է. երբ մեծանկյեն խորհրդարանի ընտրություն ճամբարից հրչելով մյուսը (կամ նաև «վայ-քաղաքագետներ», վերջին երեք տարում արդեն չորրորդ ճամբարն են մուտք գործում), համախմբվելով հիմնականում վարկաբեկիչ «նյութեր», իրենց ելույթներով ոչ միայն սրում են առանց այդ էլ շատ դաժան քաղաքական պայքարը, այլև հրբրացս ստեղծում անվստահության մթնոլորտ, իսկ որ ամենավտանգավորն է, բոլոր քաղաքական ուժերին հեռացնում են գաղափարախոսական հարցերի շուրջ երկխոսություն վարելու փորձերից:

Ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ քաղաքական ամբողջ երկխոսությունը կառուցվում է հիմնականում զուտ անձնական շփումների հիման վրա: Հենց այդ պատճառով ներկայումս ստեղծվող դաշինքները բացիս քաղաքական իմաստով «իկեբանայի» բնույթ ունեն: «Չախնորի» դաշինքը կազմված է վեց կուսակցությունից, կառավարող կուսակցության մասնակցությամբ: Ընդդիմադիր կուսակցությունների նոր դաշինքը կազմված է հայացքներով տարբեր, բայց ընդհանուր լեզու գտած կազմակերպություններից: Այդ դաշինքի կուսակցությունների մեջ առընչեցրեց կոմունիստների և դաշնակցականների ոչ պատահական երկխոսությունը: Չէ՞ որ երբ նրանք ընդհանուր լեզու գտած լինեին 1920 թ., մեր ժողովուրդը գուցե ավելի քան 70 տարի չընդհատեր դեռ իր անկախությունը:

Ամբողջ առավածը վկայում է, որ խայտաբղետ ու մեծ ունեցող քաղաքական բանբասանքը բաժանվում է երկու հիմնական տեսակի. բանբասանք իշխանությունների մասին և բանբասանք ընդդիմության մասին: Եւ թե այս ամենին ավելացնենք նաև այն, որ բանբասանքը գաղափարախոսար չհավորության հասցված հասարակության մեջ ստեղծում է անվստահության կայուն մթնոլորտ, ապա կարելի է լիակատար վստահությամբ ասել, որ առաջիկա ընտրություններում 8 ամիս հետո, քաղաքական բոլոր դեկավարները լիովին վարկաբեկված կլինեն, և իշխանության գլուխ կանգնեն մեր կյանքի հետ ընդհանուր որևէ բան չունեցող ուժեր:

ԱՐԱՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ,
պատմագիտության թեկնածու

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ռիչարդ Հովհաննիսյան. «Այս հողակտորը դարձնենք իրական երկիր»

Երևանի պետական համալսարանի 75-ամյակի հանդիսություններին մասնակցելու նպատակով Երևանում է գտնվում ամերիկահայ անվանի պատմաբան, հայագետ, Կալիֆորնիայի համալսարանի հայագիտության ամբիոնի հիմնադիր և ղեկավար Ռիչարդ Հովհաննիսյանը: Մի քանի օր առաջ նրան շնորհվեց Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտորի կոչում: Լայնորեն հայտնի են Ռիչարդ Հովհաննիսյանի՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված մեծարժեք աշխատությունները, իսկ Հայաստանի առաջին հանրապետությանը նվիրված նրա քառահատոր աշխատությունը մեր պատմության այդ ժամանակաշրջանի բերեա ամենամեծ ուսումնասիրությունն է: Օգտվելով առիթից, մեր թղթակիցը հանդիպեց և հարցազրույց ունեցավ նրա հետ:

- Նախ թույլ տվեք շնորհավորել Ձեզ Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտորի կոչման առթիվ: Ինչպիսի՞ զգացումներով ընդունեցիք այն և չե՞ք պատրաստվում արդյոք երբևէ դասախոսություններ կարդալ Հայաստանի մայր բուհում:

- Ես ինձ շատ շոյված զգացի, որ համալսարանի վարչությունն ինձ նման պատվի արժանացրեց, մանավանդ որ դա տեղի ունեցավ 75-ամյա հոբելյանի կապակցությամբ: Ես իմ աշխատություններում մանրամասն անդրադարձել եմ 1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում համալսարանի բացմանը, իսկ այն ժամանակ նույնպես Հայաստանը գտնվում էր ծանր պայմաններում. խախտված տնտեսություն, սով, ցուրտ, գաղթականներ... Եւ չնայած դրան, այդ պայմաններում նույնպես գտնվեցին մարդիկ, որոնք մտածում էին գիտության ու կրթության մասին, և ինչպես այն ժամանակ իր ելույթում շեշտեց Նիկոլ Աղբալյանը, եթե մենք մի ձեռքում սուր ենք պահում, ապա պարտավոր ենք մյուսում գրիչ ունենալ: Այսօր նույնպես դժվարին պայմաններ են, և չի կարելի մոռացության մատնել ուսումը՝ մանկապարտեզից մինչև բարձրագույն կրթություն: Ինչ վերաբերում է Երևանի համալսարանում դասախոսություններ կարդալուն, ապա գիտե՞ք, իսկապես հասել եմ այնպիսի տարիքի, որ զգում եմ, թե արդեն ծանր տարիներ են, և գուցե իսկապես թողնեմ իմ համալսարանը կամ աշխատեմ կես դրույքով, մանավանդ որ և Երևանի համալսարանից և տարբեր ինստիտուտներից բազմաթիվ հրավերներ եմ ստացել: Չկան այնպիսի պայմաններ են, որ ոչ միայն ես, այլև շատերը կարող են գալ և դասախոսություններ կարդալ, մանավանդ որ ամերիկյան կառավարությունն ունի բազմաթիվ ծրագրեր, որ շատերը կարող են գալ և ոչ վատ վճարով (ոչ թե ամիսը 2 հազար դրամով, որն անհեթեթ է) դասախոսել Հայաստանում:

- Հայաստանի ներկայիս իրավիճակը շատ նման է 1918-20 թթ. Առաջին հանրապետության իրավիճակին. կրկին տնտեսական ծանր վիճակ, կրկին պատերազմ, շրջափակում, գաղթականներ, կրկին արևմտյան տերությունները ձգտում են սիրաշահել Ադրբեջանական Նավթին և այլն: Ըստ Ձեզ, որո՞նք են տարբերությունները:

- Այո, ես բազմիցս անդրադարձել եմ այս խնդրին, և գիտեք, երբ նմանություններ ես տեսնում, փոքր ինչ սարսափելի է: Պետք է ասել, որ նմանությունները ոչ միայն արտաքին են: Ինչպես այն ժամանակ ցարական Ռուսաստանն արդեն չկար, բայց Հայաստանում մնացել էին ցարական չինովնիկները, այնպես էլ հիմա է: Ու թեև բարձրաստիճան պաշտոնյաները, նախարարները կարող էին ազնիվ մարդիկ լինել, սակայն շատ դժվար էր փոխել ամբողջ ոճը: Նույն դժվարությունները կան նաև այսօր: Սակայն կան նաև տարբերություններ: Նախ և առաջ խորհրդային Հայաստանի 70 տարվա պատմությունն իզուր չանցավ՝ ստեղծվեց ազգային գիտակցություն, գիտությունների ակադեմիան, ինստիտուտներ, մշակութային խիտ ցանց: 1919-20 թթ. Երևանը հետամնաց քաղաք էր, հայ ժողովրդի ամբողջ ուժը կենտրոնացված էր Թիֆլիսում: Այսօր այդպես չէ: Բացի այդ, այն ժամանակ Հայաստանի տարածքի մի զգալի մասը պարզապես չէր ներառվում երկրում (Զանգեզուր, Բոլուր Վեդի և այլն): Այդ շրջաններում բնակվող տարբեր ազգություններ, որոնք այն ժամանակ պարբերաբար ապստամբում էին, այսօր չկան: Սա ինքնին շատ կարևոր տարբերություն է: Բացի այդ, որքան էլ իշխանությունները և կառավարությունը թերի լինեն, և ժողովուրդը պատրաստ չլինի ժողովրդավարության, այնուհանդերձ գոյություն ունի ժողովրդավարության կառույցը, ինչը չկար Առաջին Հանրապետության տարիներին: Մնում է միայն իրականություն դարձնել ժողովրդավարության այդ կառույցը:

- Ցավոք, հայ ժողովրդի վերջին հարյուրամյակների պատմությունը կորուստների պատմություն է եղել: Դարասկզբին հայ ժողովրդի մայրերն ավարտվեց մարդկային և տարածքային մեծ կորուստներով: Ձեր կարծիքով ի վիճակի՞ է արդյոք հայ ժողովուրդը մայրենի ներկա փուլից դուրս գալ շահած կամ գոնե առանց կորուստների:

- Իսկապես, երբ մտածենք դարասկզբի մասին, ապա հայությունը թեև անկախ չէր, սակայն Պոլսից մինչև Բաքու ընկած տարածքում գերիշխում էր տնտեսության և մշակույթի բնագավառներում: Եւ հայությունը կամաց-կամաց սեղմվեց, պարփակվեց ներկա տարածքում՝ կորցնելով ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Կարսի մարզը, Շարուր-Նախիջևանը և այլն: Իհարկե, հոգեբանորեն դա ծանր է հայությանը, և իմ կարծիքով ղարաբաղյան շարժման ուժը հենց այն է, որ վերջապես հայ ժողովուրդը հասկանում է, որ կարող է ոչ միայն սեղմվել, այլև ընդարձակվել և փորձել տնօրինել սեփական բախտը: Պետք է ասել, որ Առաջին հանրապետության օրոք ոչ ոք չէր կարող պատկերացնել, որ անկախ Հայաստանը կարող է գոյատևել այն նեղ հողակտորի վրա, որը շրջապատված էր իրեն: Այդ պատճառով էլ նրա ձգտումը, գուցե և սխալ, բայց միշտ եղել է դեպի Արևմուտք՝ կարծելով, թե արևմտյան տերությունները կօգնեն իրականացնել միացյալ Հայաստանի գաղափարը: Մենք գիտենք, որ Հայաստանն այսօր ի վիճակի չէ նույնիսկ կերակրել իրեն իրեն: Իհարկե, միացյալ Հայաստանի գաղափարը մի կողմ չենք դրել, սակայն պետք է իրատես լինենք, քանի որ առայժմ բավարար հզորություն չունենք և փորձենք անհնարինը հնարավոր դարձնել, այս հողակտորը դարձնենք իրական երկիր և փորձենք միջոցներ գտնել գոյատևելու: Հույս ունեմ, որ այդ միջոցները կգտնվեն: Ես ռոմանտիկ չեմ, սակայն անհրաժեշտ է իրատես լինել: Հայաստանին անհրաժեշտ է հզոր մի հովանավոր, որը ոչ միայն խոսքերով, այլև գործով պաշտպանի մեզ: Անշուշտ, նման պաշտպան ունենալու դեպքում սահմանված պիտի լինենք մեր անկախությունից որոշ բաժին զիջել, սակայն պետք է իրատես լինել: Իհարկե, Հայաստանը հնարավորություն ունի այսօր շահած դուրս գալ ստեղծված իրավիճակից: Դրա համար պետք են դաշնակիցներ: Թշնամիներով շրջապատված Իսրայելն ավելի քան 50 տարի է, ինչ գոյատևում է դաշնակիցների շնորհիվ, քանի որ կարողացել է համոզել, թե իրենց շահերը նույնն են: Հայաստանը պետք է փորձի համոզել գոնե մեկ հզոր պետության, որ նրա և Հայաստանի շահերը նույնն են: Ճիշտ է, դա դժվար է, քանի որ Հայաստանը չունի հզոր խաղաթուղթ՝ ասենք նավթ, սակայն գոյություն ունեն նաև ռազմավարական ինչ-ինչ խնդիրներ: Եթե չկարողանանք համոզել, կորուստները կշարունակվեն:

- Տարբեր տեսակետներ կան այն մասին, թե հայոց պահանջատիրության խնդրի բարձրացումն այսօր հակասում է Հայաստանի Հանրապետության շահերին: Ինչպիսի՞ն է Ձեր կարծիքը:

- Գիտեք ինչ, պետության և ժողովրդի շահերն այնքան էլ չեն տարբերվում իրարից: Պետությունը պետք է միշտ պահպանի իր արժանապատվությունը: Երբեմն խոհեմ է լռեցնել որևէ հարց, սակայն խոհեմ չէ մոռացության տալ այն և այնպիսի զիջումներ անել, որ նվաստացնում են արժանապատվությունը: Այդ դեպքում դիմացինը պարզապես մեզ չի հարգի և վաղն ավելի ծանր պահանջներ կդնի: Հայաստանը պետք է լինի հետևողական. «Մենք պատրաստ ենք առանց նախապայմանների հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ և առայժմ չենք արծարծել ցեղասպանության խնդիրը, սակայն ընդհանրապես հրաժարվել դրանից չենք կարող»:

ԱՐՍԵՆ ԲԱՐԴԱՍԱՐՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԻՍՐԱՅԵԼ

Ցիցխակ Շամիրի գուշակությունները

Երկու տարի առաջ Իսրայելի Աշխատավորական կուսակցությունից պարտություն կրելուց հետո նախկին վարչապետ Ցիցխակ Շամիրը ձեռք է բերել նոր կարգավիճակ. նա դարձել է Իսրայելի քաղաքական խաղի յուրօրինակ բախտագուշակ: Ինչպես նշում է Le Point հանդեսը, վերջերս նա այդ դերում կրկին փայլեց իսրայելա-սիրիական բանակցությունների վերսկսման առթիվ հեգնալից արտահայտություն անելով. «Գոլանի սարահարթից հետ քաշվելու



իր պատրաստակամության պատճառով Ռաբինի կառավարությունը Իսրայելին կանգնեցնում է սայթաքուն և ծայրաստիճան վտանգավոր զառիթափի վրա, որը հարցականի տակ է դնում մեր գոյությունը»: Վեց տարի Իսրայելի ճակատագիրը տնօրինած ազգայնական աջերի Լիկուդ դաշինքի «հանգուցյալ ու ծեր» 79 ամյա Ցիցխակ Շամիրն այսօր, փաստորեն, քաղաքական հավակնություններ չունի: Կնեսեթի ճիստերից համախմբի բազմակարդ պատգամավոր Շամիրը Թել Ավիվում իր գրեթե արձակուրդային վիճակից օգտվեց հուշեր գրելու համար: Այս տարվա սկզբներին եբրայերեն հրատարակված գիրքը մեծ բացահայտումներ չկատարեց ազգայնական հին մարտիկի կյանքի սկզբում կողմերի առնչությամբ. 1940-ական թթ. նա «Շթերն» խմբի ղեկավարն էր Բրիտանիայի օկուպացման դեմ ծավալված պայքարում, իսկ 50-60-ական թթ. գլխավորում էր Իսրայելի «Մոսսադ» գաղտնի ոստիկանական ծառայությունը: Այն պահից, երբ իսրայելցի ընտրողները 1992 թ. Շամիրին ստիպեցին Երուսաղեմում թողնել Պետական խորհրդի նախագահի իր գրասենյակը, նախկին վարչապետը տխրությամբ հետևում է նոր վարչապետ Ցիցխակ Ռաբինի և արտգործնախարար Շիմոն Պերեսի «փայփայիչ» գործունեությանը:

Հարկ է նշել, որ Շամիրին հաջորդած Աշխատավորական կուսակցության ներկայացուցիչները անդուլ կերպով ջանում են վերսկսել հաշտության այն բանակցությունները, որոնք լիովին էր ջախջախել էին նրա առասպելական պասսիվության պատճառով: Դառնալով «աղետաբեր» սցենարի մասնագետ, Շամիրն անդադար չարագույժ գուշակություններ է անում, մասնավորապես պնդելով, թե «Պաղեստինի ազատագրման կազմակերպության հետ համաձայնագրեր ստորագրելով իսրայելցիները կրակեցին իրենց սրտին»:

Այս օրերին, երբ Քուվեյթի սահմանի մոտակայքում իրաքյան զորքերի կուտակման պատճառով արևմտյան շատ երկրներ կրկին միջազգային ուժեր են ուղարկում Պարսից ծոց, շատերը վերհիշում են 1991 թ. «Անապատի փոթորիկ» գործողության ընթացքում բազմազգ ուժերի հրամանատար, ամերիկացի գեներալ Նորման Շվարցկոպֆի անունը: «Երբ մի օր ես ստիպված լինեմ ընտրություն կատարել իմ բարոյական սկզբունքների և պարտականությունների միջև, գիտեմ, որ կընտրեմ իմ սկզբունքները», սիրում է կրկնել գեներալը: Օրերս նրա մասին նյութ հրապարակեց ֆրանսիական Le Point հանդեսը:

...կան գործունեությամբ, չնայած ամերիկյան երկու գլխավոր կուսակցությունների առաջարկություններին: Նորման Շվարցկոպֆը նախընտրում է իր ժամանակը նվիրել դասախոսություններին: Դա շատ ավելի ձեռնտու զբաղմունք է, քան քաղաքականությունը (երեք ժամվա ժամանց երկրի համար նա ստանում է մինչև 120 հազար դոլար):

Այդուհանդերձ, գեներալը երբեմն չի հրաժարվում որոշ մեկնաբանություններից: Հաիթի կատարված ներխուժման առթիվ նա սեպտեմբերի 16-ին նշեց, թե ինքը դեմ է դրան, բայց ամերիկացի զինվորների այնտեղ հանձնման դեպքում պատրաստ կլինի աջակցել ամերիկյան զորքերին և երկրի նախագահին:

Մ. ՆԱԶԱՆՑԵՐ

Նորման Շվարցկոպֆ. Անդորր փոթորկից հետո



Նորման Շվարցկոպֆը ծնվել է Նյու Ջերսի նահանգի Թրենտոն քաղաքում: Նա գերմանացի տարագիրների զավակ է և հոր նման զինվորական է դարձել: Ուեսթ Փոինթի զինվորական դպրոցի 480 ավարտականների մեջ նա դասվում է ընդամենը 48-րդ զուգանիշը, բայց դա չի խանգարում, որ դասասենյակներն ու ընկերները գնահատեն նրա մտավոր հատկանիշները: Վիետնամական պատերազմի հերոս դառնալով, նա տուն է վերադառնում ամերիկյան 5 բարձրագույն շքանշաններով: Այնուհետև հրամանատարական աշխատանք կատարելուց հետո Շվարցկոպֆը մասնագիտանում է անապատային պատերազմի բնագավառում: Նրա բազմաթիվ գիտելիքները 1991 թ. մեծ են գալիս Պարսից ծոցի պատերազմի ժամանակ, որտեղ նա գլխավորում է դաշնակից ուժերի «Անապատի փոթորիկ» գործողությունը: Դրանից հետո նրա զինվորական կարիերան ավարտված է: ԱՄՆ վերադառնալուց հետո 1992 թ. նա հրապարակում է «Ծոցի պատերազմի հուշեր» աշխատությունը, բայց կտրականապես հրաժարվում է զբաղվել քաղաքա-

Այսօր ամերիկյան հայտնի կազմակերպություններից մեկի վարչակազմի խորհրդի նիստերին մասնակցելուց բացի, գեներալ Շվարցկոպֆը ֆինանսավորում և զբաղվում է հիվանդ երեխաների արձակուրդի կենտրոնի գործերով: Նրա ամենամեծ ուրախությունը երեխաներին ձկնորսություն սովորեցնելն է:

«Քենեդիի սպանության վերաբերյալ ճշմարտությունը բացվել է»

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ. ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Ամերիկացիների գերակշիռ մեծամասնությունը համոզված է, որ գոյություն է ունեցել նախագահ Քենեդիի սպանությանն ուղղված դավադրություն: ԱՄՆ-ի հասարակայնությունը գտնում է, որ դավադրություն է գոյություն ունեցել նաև այդ հանցագործության վերաբերյալ ճշմարտությունը բացահայտելու նպատակով: Ցավոք, մինչև օրս որոշակիություն չկա այն հարցում, թե ովքեր են եղել դավադիրները»:

Երեկ բացի օր նախագահ Քենեդիի սպանությանն առնչվող փաստաթղթերի ուսումնասիրման համար հանձնաժողովի առաջին նիստում իր գործունեությունն այս հայտարարությամբ սկսեց առաջին վկաներից մեկը' փաստաբան Ջեյմս Լիզարը:

ՏԱՄԱՌՈՏ

Իրանը զենք կուտակելու նպատակ չունի

Իրանը մտադիր չի ընդդիմանալու, որ Ռուսաստանը կասեցնի Թեհրանին զենք մատակարարելու պարտավորությունները, եթե Մոսկվան պատրաստ չէ դրան, հոկտեմբերի 12-ին «Իռնա» գործակալությանը տված հարցազրույցում հայտարարել է Մոսկվայում գտնվող Իրանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Մ. Վայեզին: Իրանը, ասել է նա, զենք կուտակելու նպատակ չի հետապնդում: Թեհրանի քաղաքականությունը նպատակաուղղված է երկրի պաշտպանունակության ապահովմանը, ինչն էլ դարձել է Ռուսաստանի հետ կնքված նախորդ համաձայնագրերի հիմքը: Զենք վաճառելու հարցը այնքան կարևոր չէ և Ռուսաստանի պաշտոնական անձանց հետ Մոսկվայում վարվող բանակցություններում օրակարգի հարց չի դառնա: ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Իսրայելը պատասխան միջոցառումներ է ձեռնարկում

ԹԵԼ ԱՎԻՎ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ. ԻՏԱՌ-ՏԱՍՍ: Իսրայելը Կահիրեից ետ է կանչել իր ներկայացուցչին, որը մասնակցում էր Պաղեստինի ազատագրման կազմակերպության հետ բանակցություններին պաղեստինյան ինքնավարության հարցերով, ինչպես նաև անորոշ ժամանակով փակել է Գազայի հատվածի հետ հաղորդակցությունը: Պաղեստինցիների դեմ այդ միջոցառումները պատասխան էին Համաս իսլամական դիմադրության շարժման զինյալների կողմից իսրայելյան զինծառայողի ծերբակալման:

Ռադիոակտիվ նյութի մաքսանենգություն

ԵՐԵՎԱՆ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ. ՓԱՍՏ: Ռումինիայի ՆԳ նախարարությունը երեկ հայտարարեց նախկին խորհրդային սպայի և Հորդանանի երկու քաղաքացիների ծերբակալման մասին, որոնք մեղադրվում են ռադիոակտիվ նյութերի մաքսանենգությամբ զբաղվելու համար: Նրանցից առգրավվել է ուրան և որոշ քանակությամբ ստրոնց: Ռումինիայի ոստիկանության տվյալներով, ռադիոակտիվ նյութերը նախատեսված են եղել Գերմանիայում կամ Հոլանդիայում վաճառելու համար:

ԻՆՏԵՐՊՈԼ

Մոլորակի գլխավոր ոստիկանը ռուսական մաֆիայի դեմ

Դատելով ամեն ինչից, հզոր Ինտերպոլը մարտահրավեր է նետում ռուսական մաֆիային: Դա պարզ դարձավ շվեդ Բյորն Էրիկսոնի ելույթից, որը քրեական ոստիկանության միջազգային կազմակերպության նախագահ ընտրվեց Հռոմի կոնգրեսում:

Արդեն վեց տարի է, ինչ Բյորն Էրիկսոնը գլխավորում է Շվեդիայի պետական ոստիկանությունը, իսկ նախկինում այդ երկրի բոլոր մաքսավորների պետն էր: Նա ընտրվել էր մաքսային ծառայությունների աշխատակիցների միջազգային խորհրդի' Ինտերպոլին հար և նման կազմակերպության նախագահ: Լրագրողների հետ զրուցելիս նա ասաց. «Ներկայումս Ինտերպոլն աշխարհի երկրորդ խոշորագույն կազմակերպությունն է: Դրա կազմի մեջ են 176 երկրների ոստիկանական ծառայությունները, ուստի մենք հնարավորություն ունենք գործելու մեր մոլորակի փաստորեն բոլոր կողմերում: Ինտերպոլի նախագահի պաշտոնում ես մտադիր եմ շեշտը դնել վերլուծական աշխատանքի վրա. ես և գործընկերներս ուզում ենք կասեցնել կազմակերպված հանցագործությունների զարգացման, դրանց կառուցվածքի ու ծագման խոր վերլուծություններ, դրանից գործնական եզրակացություններ անելով»:

«ԻԶՎԵՍՏԻԱ», 11 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԲՐԻՏԱՆԻԱ

Թետչեր կրտսերը ձեռքը մեկնում է կասպիական նավթին

Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ, «Երկաթյա լեդի», իսկ այժմ բարոնուհի Մարգարետ Թետչերի միակ որդին Մարկը, առայժմ չհաստատված տեղեկությունների համաձայն, փորձում է որևէ ձևով մասնակցել Կասպից ծովի նավթահանքերի մշակմանը:



Ինչպես նշում է «Իզվեստիա» թերթը հոկտեմբերի 11-ի համարում, Մարկը իր մոր նման արտակարգ ընդունակությունների տեր է, բայց ոչ թե քաղաքականության բնագավառում, այլ մոր քաղաքական կշիռն ու անունն անձնական շահերին ծառայեցնելու գործում:

Մարգարետ Թետչերի վարչապետ դառնալուց առաջ Մարկն զբաղվել է ինչով ասես, նույնիսկ բախտը փորձել է ավտոարշավում: Բայց մոր վարչապետության օրոք նա արագորեն գիտակցեց սեփական վիճակի առավելությունները: Սկսեց մեծ բաներից: Դեռ 1980 թ. նա ամբողջ Բրիտանիայում հայտնի դարձավ նրանով, որ սկսեց ճարտարապետական հա-

...գանձ և այլ արտասահմանյան գործարքներից այն պահին, երբ մայրը տքնում էր Բրիտանիայի տնտեսության խնդիրների վրա:

1984 թ. նա որպես «Սիմենթեյշն ինթերնեշնլի» խորհրդատու մասնակցեց Օմանին 300 մլն. դոլարի գնի համալսարանի պայմանագրի կնքմանը և ստացավ պատկառելի միջնորդավճար: Թետչեր մայրիկը ամեն կերպ աջակցում էր որդու նոր հաջողություններին, համաձայնություն տալով էմիրությանը զենքի վաճառքին:

Նույն տարիներին Մարկ Թետչերը միջնորդի դեր խաղաց զինվորական համագործակցության մեջ խոշորագույն գործարքում, երբ Մեծ Բրիտանիան Սաուդյան Արաբիային վաճառեց 25 միլիարդ դոլարի զենք: «Մարկն ուներ կառավարության հետ լավ կապեր և արժեքավոր տեղեկություններ», վերհիշում է Արդել Ազիզ ալ Իբրահիմը' Սաուդյան թագավորական տան անդամներից մեկը:

Նախազգուշացված լինելով, որ որդին կարող է իրեն լրջորեն վարկաբեկել, Մարգարետ Թետչերն այնուամենայնիվ չդադարեց չափն անցած զավակին: Ո՞ր մայրը բարիք չի ցանկանում որդուն: Այդ ժամանակ որդին գրպանեց 12 մլն. դոլար և բնակություն մեկնեց Դալլաս (Տեխասի նահանգ):

Մարգարետ Թետչերի հրաժարականից հետո նրա որդու ձեռնարկչական գործունեության մասին ոչինչ չէր հրապարակվում: Կասպից ծովի նավթի առնչությամբ Մարկ անվան հիշատակումը կարելի է գնահատել միայն որպես այն բանի վկայություն, որ Թետչեր հայտնի ազգանունը դարձյալ կարող է նկատուս բերել:

ԹՈՒՐՔԻԱ

20 միլիարդի վնաս իրաքյան էմբարգոյից

1994-ին Թուրքիայի տնտեսության անկումը կազմել է 10.08 տոկոս, արժեզրկումը' 116 տոկոս: 4 տարվա ընթացքում Իրաքի մատակարարումների էմբարգոյի հետևանքով Թուրքիայի տնտեսությունը կրել է 20 մլրդ. դոլարի վնաս: Հաղորդելով այս մասին, «Ազատություն» ռադիոկայանը նշում է, որ ԱՄՆ-ը չի հավատում դրան, սակայն վնասն իսկապես մեծ է, քանի որ մինչև ՄԱԿ-ի պատժամիջոցը Թուրքիայի հետ առևտրի բնագավառում Իրաքը զբաղեցնում էր երրորդ տեղը: Տարեկան առևտրի ծավալը կազմում էր 3 մլրդ. դոլար: 968 կմ երկարությամբ նավթամուղով և բեռնատար մեքենաներով Թուրքիայի տարածքով Իրաքի նավթի տարանցիկի դիմաց Թուրքիան տարեկան ստանում էր 250 մլն. դոլար, բացի դրանից, Թուրքիան նավթ էր գնում Իրաքից:

Մինչև պատժամիջոցի կիրառումը Թուրքիան շինարարական աշխատանքներ էր կատարում Իրաքում, որի դիմաց նույնպես մեծ եկամուտներ էր ստանում: Այժմ Իրաքը Թուրքիային պարտք է 700 մլն. դոլար, սակայն այս գումարը նա կարող է վերադարձնել միայն պատժամիջոցը վերացնելուց հետո: Թուրքական իշխանությունները ընդգծում են, որ ՄԱԿ-ը բացառություն է արել Հորդանանի համար, որն օրական Իրաքից ստանում է 65000 բարել նավթ: Բացի դրանից, 4 մլն. բնակչություն ունեցող Հորդանանը փոխհատուցման ձևով, պատժամիջոցի վնասների հետևանքով ստացել է 6 մլրդ. դոլար, այն դեպքում, երբ 57 միլիոնանոց Թուրքիան հատուցում ոչինչ չի ստացել: Դեռ ավելին, Թուրքիային հատկացված 363 մլն. դոլարի ռազմական օգնության 10 տոկոսը վերցրել է ԱՄՆ-ը: Թուրքիան դժգոհություն է հայտնել նաև, որ իր ռազմակայանի վրա հյուսիսային Իրաքի քրդերի համար ինքնավարության ստեղծման հարցում օգնում էր ԱՄՆ-ին և նրա դաշնակիցներին: Դրա հետևանքով էլ քրդերն իրենց համար ինքնավարություն են պահանջում նաև Թուրքիայի հարավ-արևելքում: Թուրքիայի արտաքին գործերի նախարարը վերջերս ասել է, որ Թուրքիան իրաքյան Քրդստանի նկատմամբ վերահսկողության վերականգնման գործում կօգնի Իրաքին:

ԵՏ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Մեր բարի, մեր լավ Հայկանուշ մայրիկ, երանի ինձ ծախսած լինեիր, ես որդության օրերի դառնությունները երանի մոռացած լինեիր և մի ինչ անձնական ուրախություն տեսած լինեիր: Այնինչ որբության կյանքը ես հոգում այնքան խոր հետք է թողել, որ մտածել եմ այս գրածի կարիքն ուրիշ մեկն ավելի կունենա, քան ես: Յավոք, 1988-ից հետո Հայաստանի գլխին թափված փորձանքները ստեղծել էին կարիքավոր դառներին: Իսկ որբությունը, թե երկրաշարժի և թե պատերազմի՝ պատճառներով, կրկին եկավ ու չոքեց հայության դռանը:

Սակայն հենց այն օրերին, երբ ռադիոն, թերթերը գրում էին նրա մասին հետ բացառիկ է: Ու հենց հիմա էլ կասեմ, թե ինչու է վերնագիրը «Հայ գիրքը Նյու Յորքում»:

Նյու Յորքի հանրային գրադարանը գիտահետազոտական բաժանմունք ունի, որն էլ իր ներքին ունի տարբեր ազգերի, ինչպես և հայ գրականության բաժին: Սարենիկը 11 տարի է, ինչ աշխատում է այդ բաժնում: Վեց լեզուների իմացությունը նրան գրադարանի փնտրված աշխատակցի համբավ է բերել: Այդ գրադարանն աշխարհի հարուստ գրադարաններից մեկն է: 30 միլիոն անուն գիրք, յուրաքանչյուրից մեկական օրինակ: "Պարզ չէ", թե ինչ դասվել է նրա համար, ով գոնե մեկ գիրք ունի անտեր: Եվ, դասակարգելով, Հայաստանից այդքան հեռու օտար այդ հավաքածուի յարկերով նվազել է: Բայց, գիրք, ամսագիր, այնուամենայնիվ, գրվում ու լույս աշխարհ է գալիս: Եվ ահա այս անգամ ծնոնդ բերված գրերի մեծ մասը կազմեցին Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հրատարակություններն, «Գարուն» ամսագրի «Աղբյուր» հրատարակչության մեկ տասնյակից ավելի գրերը, բառարաններ, ամսագրեր:

Նյու Յորքի հանրային գրադարանի հայկական բաժինը ասիական բաժնի հարստանում է: Դրանք բոլորը ներմուծված են երկրների համակարգչային ցանցի մեջ, որի միջոցով տեղեկություններ են ստանում և օգտվում են հեռու ու մոտիկ շատ գրադարանների ընթերցողներ: Այնպես

Հայ գիրքը Նյու Յորքում

Սեպտեմբերի վերջին օրերն էին: Հայաստանում երեկ մարդ չմնաց, որ չլսեր, չհիանար ու հետո չտխրեր 86-ամյա ֆրանսահայ Հայկանուշ մայրիկի բարեգործությամբ: 1915-ին որբացել էր և հետո, ամբողջ կյանքում սղասերով դժվարին աշխատանքով կտրել ու կտրել հավաքել, թաքուն մի տեղ դրած էր սկել ո՛չ թե իր ներ օրվա, այլ ուրիշին հասնելու, ուրիշին օգնելու համար: 5000 դոլլար:

[illegible] միշտ, ընկերները դիմավորեցին Նյու Յորքից հայրենիք եկած Սարենիկ և Քաջազ Քեչեջյաններին, որոնք ճիշտ նույն եղանակով էին եկել, նույն առատաձեռնությամբ օգնել կարիքավորներին, գոնվել ազատամար տիկների զավակներին, գնալ Արցախ, անփոփոխ ձեռներով մնացել ուշացի օգնությունը:

Նրանք Երևանում մնացին տասն օր և այդ օրերին սենց դուրս չեկան: Վեց ճամփորդի և բավականին մեծ գումար ոչ միայն իրենց, այլև նյութերի-կարինակ շատ հայերի կողմից:

«Կեանքեմ Հայաստան», այս արտահայտությունը նրանց ընտանիքի ամենօրյա խոսքն է եղել: Երեխայի սաղ հագուստ, կոշիկ, մեծերի համար զգեստներ, ինչ որ մասչելի է իրենց գրպանին: Նույնիսկ տարբեր ափերից ստացած նվերները դարձնում էին ճամփորդակենրում մենք մեր ունեցածով կբավարարվենք, հայրենիքում սրանք մեկ ուրիշին ավելի են հարկավոր: Նախորդ այցից անցել է երեք տարի, բազմիցս կրկնվել է «Կեանքեմ Հայաստան», և հիմա եկել են, տասն օր է գան գամ են տարբեր համարներով, կանչում «հարազատներին», հանձնում են, նվիրում հագուստ, գումար, դեղեր: Հուզումներն ու լարումն այնքան շատ էին, որ, ի վերջո, իրենց էլ օգնության կարիք զգացին... բժշկի:

Թերևս Հայկանուշ մայրիկի պատրաստ տա՞ր էր բացառիկ և դրա համար նրա մասին այդքան խոսվեց ու գրվեց: Թերևս Սարենիկ և Քաջազ Քեչեջյաններինը (երկրաշարժից հետո երրորդ անգամն է, որ գալիս են) այնքա՞ն էլ արտասովոր չէ, քանի որ նրանց նման շատերը, անհատներ թե կազմակերպություններ, նույն կերպ են վարվում: Սակայն, շարունակությունից կիմանաք, որ տիկին Սարենիկի դարու



Սարենիկի ամուսինը դարձել Քաջազը, նկարիչ է: Նրա բեմանկարը հայկական են: Օտարության մեջ նա Հայաստան է նկարում: Եղեռնի 70-ամյակի առթիվ ԱՄՆ-ում լույս է տեսել Քաջազի «Անիի խեղդեն ձեռքը» ալբոմը: Նկարների մի շարք ստեղծվել է Սպիտակի երկրաշարժից հետո: Մեկ այլ շարք կոչվում է «Սոմգայիթ»: Կա նաև Արցախյան շարք: Տխուր թեմաներ, սակայն վարպետը հույսի շողեր են խառնված ոգեշնչում արևային ու նրան հյուսի բառարագրյալով լի կտավներ գրավում են դիտողին: Հայկական այրեր, հայկական եկեղեցիներ, Արարատյան դաշտեր խաղցրած խաղողի, Անիի բերդապարտի վրա «վազող» վազր, մանրնկարի մի խոյակ և լեռներ, լեռներ ու արշալույսի և վերջալույսի շղարշներով ծածկված ու նրանց ուժին քաշած մի փռվիկ «Կարմրավոր», «Այդ բոլոր կողքին նաև «Լեռնարդու դա Վինչին Հայաստանում», որն արժանացել է երկու դիտողների (Իտալիայում և Անգլիայում), և որն այժմ, ժեստական թեմային է Իտալիայի Վինչի քաղաքի Լեոնարդո դա Վինչիի անվան գրադարանի:

Լիբանան-Հայաստան-Լիբանան-ԱՄՆ: Սակայն բոլորից լավ Վիլյամ Սարոյանն էր տեսել նրանց սիրտ լեռներում է: Եվ այդ է պատճառը որ էլ գնան, իրենց հայրենի հողը, հայրենի լեռների ու ձորերից կարոտ ծգում է, մեսուղես վերադարձնում դեպի իրենց, ավելի շատ ուժ առնելու, քան տալու համար:

Ուրեմն, տպագրական ձևակերպությամբ Նյու Յորքի հանրային գրադարանի մեծ մասը, սակայն, գնված են գրախանութներից, հնարավորության դեպքում նույնիսկ հրատարակչություններից: Գրքերի մի մասն առաքվում է փոստով: Որոշ գրքեր փոխանակվում են և հետո, Սարենիկի խնդրանքով, ուղարկվում եկեղեցու հետ կամ դարձյալ փոստով:

Նյու Յորքի գրադարանը պայմանագրով կապված է եղել Երևանի Մյասնիկյանի անվան հանրային գրադարանի հետ: Մինչև 1988 թվականը պարբերաբար գրքեր, թերթեր ու ամսագրեր են փոխանակվել:

Սակայն, 88-ից հետո Երևանից հանրային ոչինչ չի ուղարկվում, տասն ամիս մեկ հնարավոր է մի ամսագիր: Գրքի տպագրությունն ան-

ՄԱՐԳՈ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Մշակույթի գործիչները պահանջում են պարարվեստի ուսումնարանը կոչել Վահրամ Արիստակեսյանի անունով

Խմբագրությունն ստացել է մշակույթի ճանաչված մի խումբ հայ ներկայացուցիչների, որոնց մեջ Խորեն Աբրահամյան, Սոս Սարգսյան, Մելիտա Կարապետյան, Ալիկար Խաչատրյան, Վիլ Թաթոյան, Էմմա Օհանջանյան, Էդուարդ Միրզոյան, Լևոն Ճանճապանյան, Լազար Սարյան, Յուրի Երզնկյան, Օվսեփ Կամպարձումյան, Արամ Խորդոյան և Պավլինե Բաժենովյան, ստորագրությամբ նամակ՝ հասցեագրված նաև և առաջ «մշակույթի նախարարությանը» և այլ «համապատասխան մարմիններին»:

«Մոտենում է Երևանի պարարվեստի ուսումնարանի 70-ամյակը: Հոբելյանական տարեկիցի նախօրեին հարկ ենք համարում կրկին անդրադառնալ պարարվեստի ուսումնարանի անվանակոչման հարցին՝ գտնելով, որ ուսումնարանը պետք է կրկի հայկական պարարվեստի հիմնադիրներից, արվեստի վաստակավոր գործիչ Վահրամ Արիստակեսյանի անունով...»:

Թեև այս պահանջը հիմնավորված ու արդար լինելուց բացի ի վերջո նաև խրախուսելի է, այնուհանդերձ (և դա նշված է նամակում), արդեն շուրջ երկու տարի է, ինչ մշակույթի նախարարության ղեկավարների բոլոր «խոստումներն ու բարի մտադրությունները մնացել են թղթի վրա»:

Նամակի հեղինակները դրամադրում են «վերջ տալ այդ անհասկանալի հապաղմանը ու հարցը լուծել հիմնականորեն»:

Ի դեպ, 1994 թ-ին լրացավ Վահրամ Արիստակեսյանի ծննդյան 95-ը տարեդարձը:

Նա ծնվել է 1899 թ. Էրզրումում: Պարուսույց-բալետմայստերի կրթությունն ստացել է Թիֆլիսում, հայազգի ուսուցիչ Վ. Էսայանի և խալագի բալետմայստեր Ա. Խլդենցիի դպրոցներում: 1922 թ-ին նա կազմակերպում է Վրաստանի պարարվեստի ստուդիան, եղել է վարիչ և դասատու նաև Վրաստանի ազգային բալետի արտիստ: Տեղափոխվելով Հայաստան, Արիստակեսյանը 1924 թ. (25 տարեկան հասակում) հիմնադրում է Երևանի պարարվեստի ուսումնարանը (այն ժամանակ Հայաստանի Լուսժողկոմատին կից պարարվեստի ստուդիա), որը և ղեկավարում է մինչև 1932 թ-ը: 1925 թ-ին կազմակերպել է հայկական ազգագրական պարերի անսամբլը, որը նրա ղեկավարությամբ և մասնակցությամբ մրցանակներ է շահել Մոսկվայում (1925 թ.) և Թբիլիսիում (1934 թ.):



1932-1938 թթ. Վահրամ Արիստակեսյանը եղել է Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի բալետմայստեր, «Այծաս» և «Անուշ» օպերաների պարերի բեմադրողը: 1957-ին Թալինի շրջանի Աշնակ գյուղում ստեղծել է ազգագրական պարերի ինքնագործ խումբ, որն արժանացել է համաշխարհային 6-րդ փառատոնի (1957 թ., Մոսկվա) դափնեկրի կոչման: Հայաստանի ժողովրդական պարերի անսամբլների համար Արիստակեսյանը վերամշակել և բեմադրել է բազմաթիվ ազգային պարեր: Երևանի պարարվեստի ուսումնարանի անվանակոչությունը միայն «դժբախտաբար» է գտել ոչ միայն Արիստակեսյանի արվեստի ժառանգության գնահատողների, այլև բոլոր նրանց կողմից, ովքեր դրանով ում են մի ժամանակ մոռացության մատնված անունների լիակատար վերականգնմանցման համար»:

ԱՐԵՎ ՊԱՇԱՅԱՆ

Գերմանա-հայկական գիտաժողով

Երեկ Հայաստանի ազգային պատկերասրահի դահլիճում բացվեց գերմանա-հայկական հարաբերություններին նվիրված գիտաժողով, որը կազմակերպել են հայ-գերմանական ընկերությունը և Բոխումի համալսարանը: Գիտաժողովը ողջունեցին Հայաստանում Գերմանիայի գործերի ժամանակավոր հավատարմատար Նորբերտ Հայնցեն և հայ-գերմանական մշակութային ընկերության նախագահ Էդուարդ Սարոյանը: Գիտաժողովը նախագահում է դոկտոր, պրոֆեսոր Կոստանդին Խուդավերդյանը: Զեկուցումներով հանդես եկան հայ և գերմանացի պրոֆեսորներ: Բոխումի համալսարանի պրոֆեսոր Բ. Բոնվեցն իր ելույթում համառոտակի ներկայացրեց, թե ինչպիսին էին գերմանական սոցիալ դեմոկրատական և բանվորական շարժումները Կովկասում 1905-1921 թվերին: Նա իր ելույթում նշեց, որ Կովկասը միշտ էլ եղել է Գերմանիայի պատմաբանների հետաքրքրությունների կենտրոնում: Այնուհետ Ստեփան Ստեփանյանը ներկայացրեց հայ-գերմանական խաղաղականության պատմությունը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին: Ելույթով հանդես եկավ Ֆիլիբ Աղանիրը, որը ներկայացրեց թուրք-գերմանական առնչությունները Կովկասում 1914-1921 թթ.: Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Վարդգես Միքայելյանի ուսումնասիրության թեման է հայոց ցեղասպանությունը գերմանական փաստաթղթերում, իսկ վերջին ելույթի խորագիրը վերտառված էր Ռիխարդ Լեպսիուսը ներկայացնելու Կովկասը գերմանական գիտական և ճանապարհորդական գրականության մեջ թեման:

Գիտաժողովն իր աշխատանքները կշարունակի այսօր և վաղը:

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ

«Էրեբունի-Երևանը» «Բարև, Երևան»

ԵՐԵՎԱՆ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: ՀՀ հեռուստատեսության «Մայրաքաղաք» ստեղծագործական խմբագրության «Բարև» ծրագրին այս տարի փորձում է վերակենդանացնել «Էրեբունի-Երևան» տոնակատարությունը: «Բարևի» նախաձեռնությունը միացավ Երևանի քաղաքապետի գործկոմի մշակույթի վարչության համագործակցությամբ հոկտեմբերի 12-ին Օղակաձև զբոսայգու «Առագաստ» սրճարանի հարևանությամբ անցկացված «Բարև Երևան» հանդիսությունը: Բազմաթիվ խմբով հանդես եկավ և «Բարևի» ծրագրի նախաձեռնությունը ողջունեց քաղաքապետ Վահագն Խաչատրյանը: Նա հայտնեց, որ քաղաքապետը մտադիր է այսուհետ ևս տոնակատարել հոկտեմբերի երկրորդ կիրակի օրը նշել «Էրեբունի-Երևանի» հոբելյանը, այն անվանելով «Երևանի օր»: Համերգային բնույթ ունեցող տոնակատարության լայն ունկնդրական ազգագրական, էստրադային, ժողովրդական համույթ ծնունդներն էր, առաջինը կայացել էր սեպտեմբերի 21-ին անկախության

ներ և անհատ կատարողներ: Ի դեպ, սա «Բարևի» երկրորդ նման նախաձեռնությունն էր, «Բարևի» 50-րդ թողարկումը:

ՆԱՊՈԼԻ

Խեղդված աղջնակի լռության ձայնը

Ջիկարի Օեն ծնվել էր գանգի արատով: Եվ միայն ռուսաստանյան վիրահատությունը փրկեց փոքրիկի կյանքը՝ վերադարձնելով վերականգնել վնասված գլխուղեղը: Աղջնակը զրկվեց մարմինը կառավարելու ունակությունից և սկսեց դժվարությամբ տեղաշարժվել:

Անցան տարիներ և լռության փոխարեն Օեն ընտրեց երաժշտությունը: 10 տարեկանում նա բուժման փոխարեն սկսեց դաշնամուրի դասեր ընդունել և շուտով բացահայտվեց նրա երաժշտական պարգևը հիացնելու տաղանդը: Շուտով աղջնակն արդեն ստեղծագործում էր:

1991-ին ծայնագրությունները թողարկող ընկերության տնօրենը հայտնաբերեց Օեի երաժշտությունը և մեկ տարի անց թողարկեց «Ջիկարի Օեի երաժշտությունը» ձայնասկավառակը, որտեղ ընդգրկված էին աղջկա ստեղծագործություններից խաղերը: Այն ի զարմանս բոլորի, վաճառվեց 70 հազար օրինակով և մրցանակ շահեց Ճապոնիայի դասական երաժշտության հեղինակավոր մրցույթներից մեկում: Այժմ արդեն նրա երկրորդ ալբոմը՝ «Կրկին Ջիկարի Օեն», վաճառվում է նույնպիսի աջակցությամբ՝ երեք շաբաթում հասել 30 հազարի սահմանագիծը: Ալբոմի մեջ զետեղված են սոնատներ, մենուետներ և վալսեր դաշնամուրի, ֆլեյտայի և ջութակի համար, որոնք արտահայտում են Օեի հետաքրքիր զգացողությունը ցինց ու մաքուր երաժշտության նկատմամբ: Սոցարդի հայրենի Ջալցբուրգ կարծես ճանապարհորդությունը ներշնչեց նրան գրելու «Որովայնի օդանավը» [illegible] ստեղծագործությունը, հետ նաևիդ վերնագրով: Բանն այն է, որ այդ օրերին Օեի ծնողները ճանապարհորդում էին օդանավով, և աղջիկը շատ էր անհանգստանում: Մ. Ա.

digitised by A.R.A.R.@

ՍՈՒՐ ԱՆԿՅԱՄԲ

Մինչեւ ե՞րբ է շարունակվելու հայրենի մարզիկ-մարզիչների արտահոսքն ու առուծախը

ՍԱՌՈ ՄՈՒՐԱԴՅԱՆ, Բեյրութ

Վերջին տարիներին «նորաձեւություն» է դարձել բեյրութահայ ակումբների կողմից հայաստանցի ֆուտբոլի մարզիչներ եւ խաղացողներ հրավիրելը։ Ցավոք, այն զանգվածային առումների բնույթ է ստացել։ Լիբանանյան ֆուտբոլի երկու ուժեղագույն հայկականները ՀՄԸՄ-ն եւ ՀՄՄ-ն, ենդ կուսակցական ու քաղաքական նկատառումներով եւ արտասահմանյան ֆուտբոլային մաֆիաների հատուկ գործունեությամբ փաստորեն «յուրացրել» են հայաստանյան ֆուտբոլի շատ ու շատ տաղանդավոր տղերի։ Մի քանի օր առաջ տասը լավագույն «հայաստանցի» մարզիկների «դարձին» լիբանանյան քաղաքացի շատ ամեի «Լեմանագին» միջոցներով կազմավորելով ՀՄԸՄ-ի ու ՀՄՄ-ի հայ ֆուտբոլիստների խինս դակտար Լիբանանի առաջնության նախօրեակին։ Վերոհիշյալ ֆուտբոլիստները չեն կարող համարել Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելու հանգամանքը լիբանանցիության հետ, քանի որ կզրկվեն դեռ սակավ հավանականությունից։ Հենց դա էլ դարձել է Բեյրութի հայկական ակումբների ղեկավարների մտահոգության ու «ստեղծագործության» առարկա։ Հարցը գնալով բարդանում ու նույնիսկ քաղաքական երանգ է ստանում։ Լիբանանի արաբական թիմերը, որոնք իրենց շարքերում ունեն եգիպտացի, գանացի, նիգերիացի, ռումինացի, ռուս, մոլդովացի, սիրիացի, իրաքցի, գանացի ֆուտբոլիստներ, այս նեւ տույրի առթիվ մասնավոր դժգոհություն հայտնելով լիբանանյան իշխանություններին դիմահանջում են Լիբանանի քաղաքացիություն շնորհել նաեւ իրենց ակումբների խաղացողներին։ Լիբանանի ֆուտբոլի ֆեդերացիայի կանոնադրությամբ, առաջնության ամեն խաղի մասնակից յուրաքանչյուր թիմ իրավունք ունի ներկայացնել միայն երեք, իսկ այսուհետեւ երկու օտար խաղացող։ Քաղաքացիության շնորհելով, որն արդեն է Լիբանանում քաղաքական ընտրությունների ժամանակ զանազան դավանանքների ու հատվածների միջեւ բախման հավասարակշռությունը պահպանելու համար, նախադասև է բացված «հյուրընկալելի» եւ մի քանի «ներմուծվածների», արդեն իսկ կատարյալ դրոշմ կազմ ունեցող լիբանանյան ֆուտբոլային աշխարհում։

Հայաստանցի «լիբանանցիները»

Մենք տեղեկացել ենք, որ հայրենի ֆուտբոլիստներ Բարկեն Մելիքյանը, Վիտալի Աղայանը, Խորեն Հովհաննիսյանը, Աշոտ Բարսեղյանը եւ ուրիշներ մեծապես օգնել են լիբանանահայ ֆուտբոլի վերակենդանացմանը, որոնք թեեւ չափազանց ժողովրդական այս մարզաձեւով հետաքրքրությունը Լիբանանը առաջում ու ընդունել է վերամիավորելով երկար տարիների կյանքափշտ, այժմ վերաբերմունքը, հյուրընկալ ու հայասեր Լիբանանը։ Սակայն մենք էլ ենք ... ենք հայրենիքի մարզական կառույցի հանդեպ միշտ. Հայաստանի հավաքականներ գիտուցան ամեն փորձով ամեն մի ասպարեզ ավյունախաղ ու հայրենի «բիզնեսմենների» կողմից, որոնք համառ մի քանի տարվա «կանոնչների», մանավանդ նորված են հատկապես օտարական դաշտում մեջ գտնվող Հայաստանին։ Այո, Վարդան Ղազարյանն ու Էմմա Բեգլարյանը, Արայիկ Աբրահամյանն ու Արմեն Գյուլբուդաղյանցը կարող են օգտակար դառնալ միաժամանակ թե հայրենի եւ թե սփյուռքահայ մարզական շարժման։

Սակայն անհասկանալի է, որ նրանց հանդեպ փարվեն որպես «մասնագիտացված ապրանքների»... Ֆուտբոլի ու բասկետբոլի Հայաստանի առաջնային մեծ մասամբ արտասահման են մեկնում օրվա հացը փնտրելու, ռուսաց էլ զինվորական ծառայությունից խուսափելու նպատակով։ Իսկ Հայաստանի մարզական ղեկավարության որոշ պաշտոնյաներ փորձ չեն անում կասեցնել հայրենիքի լավագույն մարզիկ-մարզիչների անկերպարկած մեկնումը, իր եղնելով «ազատ դեմոկրատական» ու «մարդու իրավունքների» պաշտպանելու ազնիվ զգացումով նրանց, չեն ուզում մյուս երկրների նման պայմանագիր-ուղեգրերով կազմակերպել մեր լավագույն մարզիկների, մարզիկ մարզահեմների մասնավոր մեկնումն արտասահման, սփյուռք։ Այսպիսի անպատասխանատու վերաբերմունքի համար մենք պատասխանատու ենք անում Հայաստանի առջեւ, որոնք մասնակից եղբայրների մարզական պաշտպան ու փառքը ոչնչացնող, խեղճն ու պաշտպանը վարդեց փառավոր մի քանի հայանուն գործունեության հանցագործությունը։ Հայ ժողովրդի համար ճակատագրական այս օրերին, երբ հայրենիքին ու սփյուռքը պատրաստվում են նշել եղեռնի զոհերի 80-ամյա հիշատակը, զգաստություն, ինքնաճանաչում, ինքնագիտակցում ենք հրավիրում բոլոր նրանց, ովքեր մաս առ մաս հայրենիքի հոգեւոր ու նյութական զանձերը օտարներին վաճառելով հետ, այժմ վաճառքի են հանել հայ ժողովրդի առաջադեմ երիտասարդությանը։

ԵՎՐՈՊԱ-96

Մոլդովայի հավաքականը զարմացնում է հաղթանակներով

Ընտրական փուլի խմբային մրցաշարերի երկրորդ շրջանն էլ ավարտվեց

Երկրորդ տուրում տեղի ունեցած 22 հանդիպումներում հյուրընկալվողներն ընդհանենը 4 հաղթանակ են տարել։ 6 հանդիպում ավարտվել է ոչ-ոքի եւ 12 անգամ հաջողությունն ուղեկցել է դաշտի տերերին։ Սա խոսում է այն մասին, որ հիմնականում թիմերի կարողությունները հավասար են եւ վճռորոշ դեր է խաղում սեփական հարկի գործոնը։ Ցավոք, Հայաստանի հավաքականը չկարողացավ Երեւանում հաղթել Կիպրոսի հավաքականին, այլապես մրցաշարային աղյուսակում կարող էր դուրս գալ առնվազն 3-րդ տեղ։ Զարմացնում են նախկին ԽՍՀՄ հանրապետություններից Մոլդովայի հավաքականը, որը 2 անընդմեջ հաղթանակ տանելով դարձավ 7-րդ խմբի միանձնյա առաջատար։ Ուշագրավն այն է, որ Մոլդովայի հավաքականը ամենեւին թույլ թիմերի չի հաղթել։ Առաջին տուրում, այն էլ Թբիլիսիում առավելությամբ է հաղթել Վրաստանի հավաքականի նկատմամբ, իսկ երկրորդ տուրում Քիշնեւում հաղթել է Ուելսի թիմին։

1-ին խումբ

4.09.94 Իսրայել-Լեհաստան	2-1
7.09.94 Սլովակիա-Ֆրանսիա	0-0
7.09.94 Ռումինիա-Ադրբեջան	3-0
8.10.94 Ֆրանսիա-Ռումինիա	0-0
12.10.94 Իսրայել-Սլովակիա	2-2
12.10.94 Լեհաստան-Ադրբեջան	1-0

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Ռումինիա	2	1	1	0	3-0	4
2. Իսրայել	2	1	1	0	4-3	4
3. Լեհաստան	2	1	0	1	2-2	3
4. Սլովակիա	2	0	2	0	2-2	2
5. Ֆրանսիա	2	0	2	0	0-0	2
6. Ադրբեջան	2	0	0	2	0-4	0

12.11.94 Ռումինիա-Սլովակիա
16.11.94 Լեհաստան-Ֆրանսիա
16.11.94 Ադրբեջան-Իսրայել
14.12.94 Ադրբեջան-Ֆրանսիա
14.12.94 Իսրայել-Ռումինիա

2-րդ խումբ

7.09.94 Կիպրոս-Իսպանիա	1-2
7.09.94 Մակեդոնիա-Դանիա	1-1
7.09.94 Բելգիա-Հայաստան	2-0
8.10.94 Հայաստան-Կիպրոս	0-0
12.10.94 Դանիա-Բելգիա	3-1
12.10.94 Մակեդոնիա-Իսպանիա	0-2

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Իսպանիա	2	2	0	0	4-1	6
2. Դանիա	2	1	1	0	4-2	4
3. Բելգիա	2	1	0	1	3-3	3
4. Կիպրոս	2	0	1	1	1-2	1
5. Մակեդոնիա	2	0	1	1	1-3	1
6. Հայաստան	2	0	1	1	0-2	1

16.11.94 Բելգիա-Մակեդոնիա
16.11.94 Իսպանիա-Դանիա
16.11.94 Կիպրոս-Հայաստան
17.12.94 Բելգիա-Իսպանիա
17.12.94 Մակեդոնիա-Կիպրոս

3-րդ խումբ

7.09.94 Իսլանդիա-Շվեդիա	0-1
7.09.94 Հունգարիա-Թուրքիա	2-2
12.10.94 Թուրքիա-Իսլանդիա	5-0
12.10.94 Շվեյցարիա-Շվեդիա	4-2

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Թուրքիա	2	1	1	0	7-2	4
2. Շվեյցարիա	1	1	0	0	4-2	3
3. Շվեդիա	2	1	0	1	3-4	3
4. Հունգարիա	1	0	1	0	2-2	1
5. Իսլանդիա	2	0	0	2	0-6	0

16.11.94 Շվեյցարիա-Իսլանդիա
16.11.94 Շվեդիա-Հունգարիա
14.12.94 Թուրքիա-Շվեյցարիա

4-րդ խումբ

4.09.94 Էստոնիա-Խորվաթիա	0-2
7.09.94 Ուկրաինա-Լիտվա	0-2
7.09.94 Սլովենիա-Իտալիա	1-1
8.10.94 Էստոնիա-Իտալիա	0-2
9.10.94 Խորվաթիա-Լիտվա	2-0
12.10.94 Ուկրաինա-Սլովենիա	0-0

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Խորվաթիա	2	2	0	0	4-0	6
2. Իտալիա	2	1	1	0	3-1	4
3. Լիտվա	2	1	0	1	2-2	3
4. Սլովենիա	2	0	2	0	1-1	2
5. Ուկրաինա	2	0	1	1	0-2	1
6. Էստոնիա	2	0	[illegible]	2	0-4	0

13.11.94 Ուկրաինա-Էստոնիա
16.11.94 Սլովենիա-Լիտվա
16.11.94 Իտալիա-Խորվաթիա

5-րդ խումբ

6.09.94 Չեխիա-Մալթա	6-1
7.09.94 Լյուքսեմբուրգ-Հոլանդիա	0-4
7.09.94 Նորվեգիա-Բելառուս	1-0
12.10.94 Մալթա-Չեխիա	0-0
12.10.94 Բելառուս-Լյուքսեմբուրգ	2-0
12.10.94 Նորվեգիա-Հոլանդիա	1-1

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Չեխիա	2	1	1	0	6-1	4
2. Հոլանդիա	2	1	1	0	5-1	4
3. Նորվեգիա	2	1	1	0	2-1	4
4. Բելառուս	2	1	0	1	2-1	3
5. Մալթա	2	0	1	1	1-6	1
6. Լյուքսեմբուրգ	2	0	0	2	0-6	0

16.11.94 Բելառուս-Նորվեգիա
16.11.94 Հոլանդիա-Չեխիա
14.12.94 Մալթա-Նորվեգիա
14.12.94 Հոլանդիա-Լյուքսեմբուրգ

6-րդ խումբ

20.04.94 Հս. Իռլանդ.-Լիխտենշ.	4-1
7.09.94 Լիխտենշտեյն-Ավստրիա	0-4
7.09.94 Հս. Իռլանդ.-Պորտուգալ.	1-2
7.09.94 Լատվիա-Իռլանդիա	0-3
9.10.94 Լատվիա-Պորտուգալիա	1-3
12.10.94 Ավստրիա-Հս. Իռլանդիա	1-2
12.10.94 Իռլանդիա-Լիխտենշտեյն	4-0

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Իռլանդիա	2	2	0	0	7-0	6
2. Հս. Իռլանդիա	3	2	0	1	7-4	6
3. Պորտուգալիա	2	2	0	0	5-2	6
4. Ավստրիա	2	1	0	1	5-2	3
5. Լատվիա	2	0	0	2	1-6	0
6. Լիխտենշտեյն	3	0	0	3	1-12	0

13.11.94 Պորտուգալիա-Ավստրիա
15.11.94 Լիխտենշտեյն-Լատվիա
16.11.94 Հյուս. Իռլանդիա-Իռլանդիա
18.12.94 Պորտուգալիա-Լիխտենշտեյն

7-րդ խումբ

7.09.94 Ուելս-Ալբանիա	2-0
7.09.94 Վրաստան-Մոլդովա	0-1
12.10.94 Մոլդովա-Ուելս	3-2
12.10.94 Բուլղարիա-Վրաստան	2-0

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Մոլդովա	2	2	0	0	4-2	6
2. Բուլղարիա	1	1	0	0	2-0	3
3. Ուելս	2	1	0	1	4-3	3
4. Ալբանիա	1	0	0	1	0-2	0
5. Վրաստան	2	0	0	2	0-3	0
6. Գերմանիա	0	0	0	0	0-0	0

16.11.94 Ալբանիա-Գերմանիա
16.11.94 Վրաստան-Ուելս
16.11.94 Բուլղարիա-Մոլդովա
14.12.94 Ուելս-Բուլղարիա
14.12.94 Մոլդովա-Գերմանիա
14.12.94 Ալբանիա-Վրաստան
18.12.94 Գերմանիա-Ալբանիա

8-րդ խումբ

7.09.94 Ֆինլանդիա-Շոտլանդիա	0-2
7.09.94 Ֆարեր. կղզ.-Հունաստան	1-5
12.10.94 Շոտլանդիա-Ֆարեր. կղզ.	5-1
12.10.94 Հունաստան-Ֆինլանդիա	4-0
12.10.94 Ռուսաստան-Սան Մարինո	4-0

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Հունաստան	2	2	0	0	9-1	6
2. Շոտլանդիա	2	2	0	0	7-1	6
3. Ռուսաստան	1	1	0	0	4-0	3
4. Սան Մարինո	1	0	0	1	0-4	0
5. Ֆինլանդիա	2	0	0	2	0-6	0
6. Ֆարեր. կղզ.	2	0	0	2	2-10	0

16.11.94 Շոտլանդիա-Ռուսաստան
16.11.94 Հունաստան-Սան Մարինո
16.11.94 Ֆինլանդիա-Ֆարեր. կղզ.
14.12.94 Ֆինլանդիա-Սան Մարինո
18.12.94 Հունաստան-Շոտլանդիա։

ՀՀ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Արարատի «Ցեմենտը» չժամանեց խաղին

«Արարատ»-«Ցեմենտ» հանդիպումը խաղացանկով նախատեսված էր հոկտեմբերի 11-ին։ Կողմերի եւ ֆեդերացիայի համաձայնությամբ այն հետաձգվեց ու դրվեց է կայանալ երեկ։ Սակայն «Ցեմենտը» մրցավայր չժամանեց։ Պատճառներն առայժմ անհայտ են։ Ընթացիկ առաջնությունում արդեն 2-րդ դեպքն է, որ «Ցեմենտը» խաղին չի ներկայանում (Մինչ Վանաձորի «Լոռի»-ի հետ խաղին)։ Ըստ կանոնադրության, 2 անգամ խաղին չներկայացած թիմը հանվում է առաջնությունից։ Դժվար է պատկերացնել նման բան, քանի որ Արարատը հանրապետության այն բացառիկ շրջաններից է, որտեղ ֆուտբոլային խանդավառությունը է եւ ակումբի ու տեղի ղեկավարները ամեն ինչ անում են այդ մրցույթը պահպանելու համար։

Գյումրիի «Շիրակը» հերթական հաղթանակը տոնեց։ Անհասանելի դառնալով եւ չեմպիոնի օծվելու համար «Շիրակին» մնացած 4 հանդիպումներում անհրաժեշտ է վաստակել թիմանենք երեք միավոր։ Կասկած լինել չի կարող, որ գյումրեցիները կհասնեն իրենց նպատակին։ Հոկտեմբերի 16-ին։ Այդ օրը «Շիրակը» հյուրընկալելու է ՀՄՄ-ՖԻՄԱ-ին։

26-րդ տուր

ՀՄՄ-ՖԻՄԱ-«Զանգեզուր»	11
«Կոտայք»-«Շիրակ»	13
«Երազանք»-«Ագնավոր»	10

Առաջնության աղյուսակը հոկտեմբերի 14-ի դրությամբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Շիրակ	24	22	2	0	71-15	46
2. ՀՄԸՄ	23	19	0	4	98-19	38
3. Բանանց	24	16	1	7	86-39	33
4. Արարատ	20	13	5	2	77-15	31
5. ՀՄՄ ՖԻՄԱ	24	12	6	6	53-35	30
6. Կոտայք	25	12	3	10	70-37	27
7. Ցեմենտ	23	10	6	7	46-36	26
8. Երազանք	24	8	5	11	23-39	21
9. Ագնավոր	23	8	3	12	33-66	19
10. Վան	24	7	3	14	30-68	17
11. Լոռի	24	5	6	13	20-54	16
12. Զանգեզուր	22	6	3	13	15-70	15
13. Նաիրի	24	5	5	14	16-40	15
14. ԲՄՄ Արայի	23	4	4	15	31-70	12
15. Կանազ	23	1	2	20	13-73	4

ԿՈՒՐՍ

Հայաստանի կարատեիստների հաջող նորամուտը

Կոբեյում ավարտվեց կարատեդո ծյոսինե սորինրյու մարտարվեստի աշխարհի առաջնությունը, որին առաջին անգամ մասնակցում էին նաեւ Հայաստանի յոթ մասնակիցներ։ Մրցասպարեզ էին դուրս եկել աշխարհի 22 երկրների մարզիկներ, որոնցից ուժեղագույններն են Չինաստանը, Ճապոնիան, Կուբան, Չիլին, Արգենտինան։ Մեր մարզիկները, որոնք հանդես էին գալիս թիմային ոչ լրիվ կազմով, հասան փայլուն հաջողության։ Հայաստանում մարզաձեւի հիմնադիր սեւ գոտի երրորդ դան խո Վարդան Գեւորգյանը, սեւ գոտի առաջին դան Մերուժան Օխիկյանն ու Արկադի Զաքարյանը թիմային կասայում արժանացան բրոնզե մեդալների։ Իրենց մրցաձեւում լավ հանդես եկան Արկադին եւ մարզադպրոցի Արարատի մասնաճյուղի սան Առաքել Պետրոսյանը, որոնք աշխարհի ուժեղագույնների մեջ տեղ գրավեցին առաջին տասնյակում։ Մասնագետները բարձր գնահատեցին Հայաստանի կարատեիստների մարտավարական պատրաստվածությունը եւ նրանց հրավիրեցին մասնակցել նաեւ միջազգային այլ բարձր կարգի մրցաշարերի։

Դ. Գ.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ
ՕՐՎԱ ԽԵՏՔԸՄԲ

ՍՏԱՄԲՈՒԼ

Թյուրքալեզուների հանդիպում

ԲԱԲՈՒԼ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԽՍԲՀ ՍԵՐՎԻՍ ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ. Սեկնաբանելով հոկտեմբերի 17-18-ը Ստամբուլում կայանալիք թյուրքալեզու պետությունների ղեկավարների հանդիպումը, Ադրբեջանի արտգործնախարար Հասանովն ընդգծեց, որ «միմյանցից երկու դար բաժանված թյուրքական պետությունները այժմ որոշել են միասնանալ»: Նա նշեց նաեւ, որ այդ ընթացքը չի կարող կասուցվել միայն հոգեւոր ու մշակութային սկզբունքներով, պետք է հավի առնվեն նաեւ հարաբերական նեղ հոգեւոր խնդիրները: Այս կառուցվածքով առաջիկա բանակցությունները կվավեն հենց այս տեսանկյունից: Մասնավորապես կկենտրոնվեն պետությունների հետագա փոխգործողության հարցերը: Հնարավոր է նաեւ, որ թյուրքալեզու պետությունների ղեկավարները արտահայտեն իրենց վերաբերմունքը հայ ադրբեջանական հակամարտության նկատմամբ:

ԹԲԻԼԻՍԻ

Հայտնի դարձան հեռուստաաշտարակի հրդեհի մանրամասնությունները

ԹԲԻԼԻՍԻ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ. Հոկտեմբերի երես 12-ի գիշեր հրդեհվեց Թբիլիսիի 274 մետրանոց հեռուստաաշտարակը: Հրդեհն սկսվեց նախորդ օրվա ժամը 22.10-ին, հեռուստաաշտարակի վերին հարկի տեխնիկական սրահներում: Հրշեջներին եւ հեռուստաաշտարակի աշխատողներին հաջողվեց մարել հրդեհի օջախը, բայց առավոտյան այն բորբոքվեց նոր ուժով: Այդվեց Թբիլիսիի «Ծամադիոն» անկախ հեռուստաընկերության հաղորդիչը: Վերջին մեկուկես ամսում սա առաջին դեպքը չէ, երբ շարից դուրս է գալիս այդ ընկերության հաղորդիչը: Հոկտեմբերի 12-ի առավոտյան հրդեհն անցավ նաեւ մյուս հարկաբաժիններ, որտեղ գտնվում են այլ հեռուստաընկերությունների հաղորդիչներ: Նման հրդեհների մարման համար անհրաժեշտ հատուկ ինքնաթիռներ չգտնվեցին: Կրակը հաջողվեց մարել միայն ժամը 13-ին: Մակայն հոկտեմբերի 12-ին ռադիոհաղորդումներ շարունակվում էին: Նախնական տվյալների համաձայն, հրդեհի պատճառած վնասը գնահատվում է մի քանի մլրդ. ռուսական ռուբլի: Հանրապետության իրավապահ մարմիններ հետաքննություն են սկսել: Դիտորդների կարծիքով, տեղի է ունեցել դիվերսիա: Հրդեհից մի քանի օր առաջ ավարտվել էր հեռուստաաշտարակի բնթե վերանորոգումը, որն իրականացնում էին մոսկվացի մասնագետները:

Co. LTD
«ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» ՍՊԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է
ՈՒՂԻՂ ՉՎԵՐՈՒՄՈՎ ԴԱՍԱԽՉ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ-ԲԵՅՐՈՒԹ
7 օրով. 3 առաջանի հյուրանոց. անունդ. օրական 2 ան...
14 օրով առանց հյուրանոց...
ԵՐԵՎԱՆ-ԿՐԱՍՆՈԴԱՐ-ՔՈՒՎԵՅԹ
7 օրով. անվճար 30 կգ ուղեբեռի փոխադրում. իսկ ավելին վճարումով:
Մուտի վիզաների եւ փաստաթղթերի չնաչխարհումը Մոսկվայում.
Տեղեկությունների համար զանգահարել 580632 հեռախոսով

«ԿՈԲՐԱ»
ընկերությունը
առաջարկում է փոխանցումային վճարմամբ
■ սալյարկա
1 լիտրի արժեքը 95 դրամ
■ բենզին
1 լիտրի արժեքը 150 դրամ
Ապրանքը մատակարարվում է 7 բանկային օրվա ընթացքում. վճարումը կատարելուց հետո:
Ապրանքի մատակարարումը կարող է կատարվել ցանկացած խմբաքանակով ,1 տոննայից սկսած:
Գնորդին ապրանքը մատակարարվում է երեւան քաղաքում, ընկերության փոխադրամիջոցներով:
Արժեզրկումից խուսափելու բոլոր պայմանագրային պայմանները կնշվակվեն կողմերի փոխհամաձայնությամբ:
Ընկերությունն առաջարկում է նաեւ մսի պահածո,
Վճարումը՝ փոխանցումով:
Հասցեն՝ Բաղրամյան 30,
Հեռ. 22.81.86, 22.32.79, 22.02.74:

ՀԱՅԱՍՏԱՆ

Քարով խփեցին Յարուգելսկու գլխին

ԵՐԵՎԱՆ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ. Հոկտեմբերի 11-ի երեկոյան Լենաւանի նախկին կուսակցական առաջնորդ եւ նախկին նախագահ Վ. Յարուգելսկին հարձակման է ենթարկվել գրախանութում, ուր նա մակագրում էր իր գիրքը: Նրան է մոտեցել մի քոլակաւոր եւ բաճկինակով փաթաթված քարով հարվածել գլխին: Տուժածը փոխադրվել է գինվորական հոսպիտալ, իսկ վնասվածքն, ըստ էության, մակերեսային է: Հարձակվողը Յարուգելսկու հետ հանդիպմանը եւ հաշվեհարդար տեսնելուն սպասել էր 14 տարի, որովհետեւ Յարուգելսկու կողմից մեղված ռազմական դրության օրերին տանկերը փլացրել էին նրա տունը:

Կրիմնայականներն անվճար ճաշարան բացեցին Տալլիննում

ՏԱԼԼԻՆՆ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՍԱՐԳԻՍ ՊՈՂՈՍ. Կրիմնա գիտակցության ընկերությունը, որը վերջերս հայտնի է դարձել ընչազուրկների համար իր կազմակերպած անվճար ճաշերով, Էստոնիայի մայրաքաղաքում բացեց բուսակերների համար նախատեսված «Դամոդարա» ճաշարանը: Այցելուներին այստեղ առաջարկվում են վեգետական բաղադրատոմսերով պատրաստված ճաշատեսակներ: Ճաշացանկում խոյաս բացակայում են միսը, ձուն, սունկը, սուրճը: Չեն վաճառվում նաեւ ծխախոտ եւ ոգելից խմիչքներ: Ռեստորանի բանույրը հատկացվում է «Կյանքի օրենսգ» մարդասիրական առաքելության ֆինանսավորմանը:

Սանկտ Պետերբուրգը կարող է հեղեղվել

ԵՐԵՎԱՆ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ. ՈՂ հիդրոծառայությունը հաղորդում է, որ նոր հեղեղում է սպառնում Սանկտ Պետերբուրգին: Հոկտեմբերի 12-ին սկսել է նեւա գետի ջրերի մակարդակի բարձրացումը, եւ ժամը 15-ի սահմաններում այն հասել է վտանգավոր սահմանագծի: Մասնագետները չեն բացառում հաղարի մի շարք բաղամասերի հեղեղման հավանականությունը:

ՄՈՍԿՎԱ

Խանութներում սննդամթերքի 70 տոկոսը ներմուծված է

ՄՈՍԿՎԱ, 13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ. ՐԻԳՆԵՍ ՏԱՍՍ-Ի ԱՐՄԵՆՊՐԵՍ. Մոսկվայի խանութներում սննդամթերքի ավելի քան 70 տոկոսն արտասահմանյան է: Այս վիճակն ստեղծվել է այն պատճառով, որ 1991 թվականից սննդարդյունաբերության մեջ ամենամյա անկումը կազմում է 16 տոկոս: Դրա հետեւանքով հարկ եղավ բնակչության պահանջի նվազումը: Այդ մասին խոսվեց «Ո՞ր ճանապարհով առաջնորդել» համաժողովում, որը կազմակերպել էր Մոսկվայի մարզի մենաշնորհ ու մանրածախ առեւտրի ձեռնարկատերերի միությունը:

Ռուսաստանի սննդարդյունաբերության վիճակի վերլուծությունից պարզվում է, որ ներկայումս ռուսական շուկայում սննդամթերքի ներմուծման ծավալները գերազանցում են 1991 թ. համապատասխան ցուցանիշը 3 անգամ: Ներկրվող սննդամթերքի 80-ական տոկոսը կազմում են ԱՊՀ-ից դուրս գտնվող երկրները: Ռուսաստանում ամեն քնանիկ սննդամթերքի վրա ծախսում էր իր բյուջեի ճիշտ կեսը, մինչդեռ այսօր ծախսում է շուրջ 50 տոկոս: Համաժողովի մասնակիցները եզրակացրին, որ այսօր Ռուսաստանի սննդարդյունաբերության ձեռնարկություններ ներդրումների խիստ կարիք ունեն: Միայն այդ եղանակով կարելի է բարելավել մրցունակությունը, դուրս գալ ճգնաժամից եւ Ռուսաստանի ներքին շուկան պաշտպանել ներմուծական մրցունակից, որովհետեւ ռուսաստանցիների դրամական միջոցները սահմանափակ են վայելում ազատ գովազդի շնորհիվ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր է. Ե. Դանիելյանը տեղեկացնում է մաշկային հիվանդություններ եւ միզասեռական ուղիների բորբոքումներ ունեցող հիվանդներին, որ նրանց ընդունելությունը այսուհետեւ կկատարվի նոր հասցեով. մետրոյի կանգառ «Բարեկամություն», Գուլակյան 14 ա շենք. բն. 26 (Կանգառով 19 շենքի հարեւանությամբ): Օրերը՝ երեքշաբթի, հինգշաբթի, շաբաթ ժ. 16-19, կիրակի՝ ժ. 11-14:
Ձանգահարել՝
23-76-67, 25-50-05

«ԵՎԱ»
ուսումնական կենտրոնը հրավիրում է Ձեզ
Սովորելու 1-3-ամսյա դասընթացներում հետեւյալ մասնագիտություններին գծով.
- օդերեսուորական գործ, ծրագրային փաթեթների եւ ծրագրավորման լեզուների ուսուցում IBM PC համակարգիչների վրա
- անգլերեն լեզվի սկսնակների համար Communicative course in English, Learning American English, The Cambridge English course (2 ցիկլով), ամերիկյան ուսումնական հաստատություններ ընդունվողների համար TOEFL
- բանկային գործ
- հաշվապահություն եւ համակարգիչների կիրառումը հաշվապահության մեջ
- կոսմետիկա եւ էպիլյացիա
- մերսում (մասաժ)
Դասընթացներն ավարտողներին տրվում են վկայականներ (սերտիֆիկատ) հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով: Մենք երաշխավորում ենք ոչ միայն ուսուցման բարձր մակարդակ, այլեւ հաստատվեց դասավանդակներ հաղարի կենտրոնում: Ընդունում ենք ամեն օր. բացի շաբաթ եւ կիրակի օրերից. ժամը 11-ից 16-ը:
Հասցեն՝ Սարյան 4
(Սարյանի տան-թանգարանի դիմաց)
Հեռախոս 58-21-22

SONY ✲ HITACHI ✲ SHARP ✲ Canon ✲ IBM ✲ AKAI ✲ GRUNDIG ✲ HEWLETT PACKARD ✲ FISHER ✲ AIWA ✲ JVS ✲ SUPRA ✲
ՖԻՐՄԱ "ԱՐԱՅ" FIRM "ARAY"
Արտասահմանյան արտադրության կոմպյուտերների, պատճենահանման ապրքերի, ֆաքսերի, հեռուստացույցների, աուդիո-վիդեո ապրքավորումների, ինչպես նաեւ նրանց շահագործման համար անհրաժեշտ նյութերի եւ սպահեստամասերի վաճառք ու նախնական պատվերների ընդունում:
Պատվերների կատարման ժամկետը 2-3 շաբաթ:
Վճարման ձեւը կանխիկ եւ փոխանցումով:
Հեռ. 25-10-87
Արտասահմանյան արտադրության կենցաղային աուդիո-վիդեո ապրքավորումների վերանորոգում եւ նրանց պահեստամասերի ներմուծում արտասահմանից:
Հեռ. 25-43-87
Հասցեն: Ք.Երեւան Ազատության պող.9
SANYO ✲ PANASONIC ✲ SHIVAKI ✲ EPSON ✲ NEC

Travel Company
"ARMINTERTOUR"
Armenia, Yerevan, str. Akopa Akopjan 2,
tel. 22.24.50
«ԱՐՄԻՆՏԵՐՏՈՒՐ» ֆիրման շարունակում է կանոնավոր չվերթներ
ԵՐԵՎԱՆ-ԲՈՒՐԳԱՍ-ԵՐԵՎԱՆ
երթուղով ամեն չորեքաբթի:
Բուրգասից կազմակերպվում է 4 օրյա ուղեւորության դեպի Սամբուլ: Երեխաներին՝ զեղչով:
Մանրամասն տեղեկությունների համար դիմել՝
Երեւան, Հ. Հակոբյան 2 (Մերգելյան ինստիտուտի դիմաց)
եւ «ԱՆԻ» հյուրանոց, 622 սենյակ
Հեռ. 27-24-50, 27-20-08, 59-46-22
A STYLE

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Շարունակվում է 1995 թ. 1-ին կիսամյակի թերթերի եւ ամսագրերի բաժանորդագրությունը:
Բաժանորդագրությունը կարելի է ձեւակերպել
1. Անհատ բաժանորդների համար՝ երեւան հաղարի փոստային բաժանմունքներում
2. Հիմնարկ ձեռնարկությունների համար (փոխանցումով կամ կանխիկ), 10-րդ փոստային բաժանմունքում (Երեւանի Հանրապետության հրապարակ)
3. Հանրապետության այլ շրջաններում միջշրջանային գործակալություններում եւ փոստային բաժանմունքներում
4. Այն հիմնարկ ձեռնարկությունները եւ հաղարացիները, որոնք կցանկանան իրենց բաժանորդագրության թերթերը ստանալ փաթեթավորված, ձեռնարկության ծոս գտնվող թերթերի եւ ամսագրերի կրպակից, բաժանորդագրությունը ձեւակերպելիս անհրաժեշտ պետք է նշեն կրպակի համարը:
5. Ռուսաստանի Դաշնության թերթերի եւ ամսագրերի բաժանորդագրության վերջին վճարման ժամկետը սեպտեմբերի 16-ն է, իսկ հանրապետության թերթերինը եւ ամսագրերինը՝ դեկտեմբերի 15-ը:
Սամուի տարածման գործակալություն

«Ժողովուրդ» հրատարակչության տպարան, Երեւան 23 Մաշտոցյան 2 Պատվեր թիվ 65. Տպաքանակ 69149. Պատվեր 1869 Տպագրված է 5000 Ստորագրված է տպագրության 13. 10. 1994 Գինը 10 դրամ

digitised by A.R.A.R.@